

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ  
(Գիտական հոդվածների պարբերական ժողովածու)

№ 13

ԵՐԵՎԱՆ  
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
2017

**ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ  
ФАКУЛЬТЕТ ВОСТОКОВЕДЕНИЯ**

**ВОПРОСЫ ВОСТОКОВЕДЕНИЯ**  
**(Периодический сборник научных статей)**

**№ 13**

**Ереван**  
**Издательство ЕГУ**  
**2017**

**YEREVAN STATE UNIVERSITY  
FACULTY OF ORIENTAL STUDIES**

**JOURNAL OF ORIENTAL STUDIES  
(scholarly periodical journal)**

**№ 13**

**YEREVAN  
YSU PRESS  
2017**

**Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի  
արևելագիտության ֆակուլտետի  
գիտական խորհրդի որոշմամբ**

**Խմբագրական խորհուրդ՝**

Մելիքյան Գուրգեն բ. գ. թ., պրոֆեսոր (*նախագահ*),  
Մելքոնյան Ռուբեն բ.գ.թ., դոցենտ , Կարապետյան Ռուբեն  
պ.գ.դ., Խառատյան Ալբերտ պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ  
թղթակից-անդամ, Հովհաննիսյան Դավիթ բ.գ.թ., պրոֆեսոր,  
Հովհաննիսյան Լավրենտի բ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթ-  
անդամ, Ոսկանյան Վարդան բ.գ.թ., դոցենտ, Սարգսյան Լևոն  
պ.գ.դ., պրոֆեսոր, Սաֆարյան Ալեքսանդր պ.գ.թ., պրոֆեսոր,  
Սաֆրաստյան Ռուբեն պ.գ.դ, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ  
ակադեմիկոս, Քոչարյան Հայկ պ.գ.թ., դոցենտ, Կուզնեցով  
Վասիլի պ.գ.թ., դոցենտ (Ռուսաստան), Տեր-Մաթևոսյան  
Վահրամ պ.գ.թ., Բեյլենկովա Մարիա բ.գ.դ., պրոֆեսոր  
(Ռուսաստան), Էքմեքչյան Լեոնա PhD (ԱՄՆ), Գրեկյան  
Երվանդ պ.գ.դ., Իլյա Յակուբովիչ բ.գ.դ, պրոֆեսոր  
(Գերմանիա), Ահմադջան Ղուրոնբեկով բ.գ.դ, պրոֆեսոր  
(Ուզբեկստան)

**ՈՐԴԵԳՐԻ ԿԵՐՊԱՐԸ «ՔՅՈՌՕՂԼԻ» ԷՊՈՍՈՒՄ  
ԵՎ ԴՐԱ ՊԱՏՄԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԵՐԸ**

«Քյոռօղլի» էպոսն ուշ ժամանակաշրջանի (XVIIդ.) ստեղծագործություն լինելով՝ հիմնավորապես պահպանել է պատմական իրադարձությունների իրական արձագանքները և շերտերը, ճշմարտացիորեն վերարտադրել Փոքր Ասիայում և Հարավային Կովկասում XVI-XVIIդդ. տեղի ունեցած իրադարձությունները, մասնավորապես, ջալալիների (ջելալիների) ապստամբությունները:

Վերոհիշյալն առավել բնորոշ է էպոսի արևմտյան խմբում ընդգրկված տարբերակներին (թուրքական, ադրբեջանական, հայկական, քրդական, վրացական, դաղստանյան ևն), որոնք հիմնականում հանգում են ատրպատականյան (կամ, այսպես կոչված, «վաղադրբեջանական») «Քյոռօղլու» էպոսին<sup>2</sup>:

<sup>1</sup> Գնդապետ, Վրաստանում ՀՀ դեսպանության ռազմական կցորդ, էլ. փոստ՝ armdefat@gmail.com

<sup>2</sup> Նկատի է առնվում 1830-ական թթ. Իրանի Ատրպատական (Ադրբեջան) երկրամասում ռուսաստանցի (լեհ) արևելագետ Ալեքսանդր Խոձկոյի (1804-1891) գրառած և 1842թ. անգլերեն Լոնդոնում տպագրված ամբողջական տարբերակը (A. Chodzko, Specimens of the Popular Poetry of Persia, as Found in the Adventures and Improvisations of Kurroglou, the Bandit-Minstrel of Northern Persia, and in the Songs of the People Inhabiting the Shores of the Caspian Sea), որը 14 տարի անց թարգմանվելով ռուսերենի՝ հրատարակվել է Թիֆլիսում (Кёр-оглу, восточный поэт-наездник, Тифлис, 1856): Բնականաբար, տվյալ ժամանակահատվածում էպոսն ադրբեջանական (հյրն.՝ ատրպատականյան) էր համարվում գրառման տեղավայրի հաշվառմամբ, սակայն 1918թ. հետո Հարավային Կովկասում «Ադրբեջան» անվամբ կազմավորման ի հայտ գալով՝ դրան ուղղակիորեն վերագրվել է էթնիկ պատկանելություն: ԽՍՀՄ օրոք հարցն առավելապես կրել է

Սկզբնավորվելով անմիջական պատմական հենքից՝ դրանք հիմնականում զերծ են առասպելական և հեքիաթախառն գծերից: Արևելյան տարբերակներում (թուրքմենական, ուզբեկական, տաջիկական, դազախական, կարակալպակյան, Բուխարայի արաբների, տոբոլ-թաթարական, ույդուրական ևն) արևմտյան խմբին բնորոշ պատմավավերական ատաղձը գրեթե անհետանում է՝ իր տեղը զիջելով վաղնջական հեքիաթախառն ու նախախալամական տարրերով հավելված զրույցների շարքին և իրանական առասպելաբանությանը:

Արևմտյան բոլոր տարբերակներում Քյոոզոլի-Ռուշանը հանպատրաստից բանաստեղծ-աշուղ է, ով իր նման վրիժառուների զլուխն անցած՝ վրեժ է լուծում հորը հանիրավի կուրացրած բռնակալներից (այստեղից էլ «Քյոոզոլի» մականունը), վարում «ազնվաբարո ավագակին» բնորոշ կյանք՝ պատսպարվելով լեռնային Չամիլբեյ ամրոցում: Էպոսի բոլոր տարբերակներին հատուկ և բնորոշ են Քյոոզոլու կողմից Այվազ պատանուն

համաթուրանական գունավորում՝ ելնելով «Հարավային Ադրբեջանի» կեղծ դրույթից, ընդամին, հենց այդ ժամանակահատվածից էլ շրջանառության մեջ է դրվել «հարավադրբեջանական» բացարձակ հակազիտական որակումը: Էպոսի խոշորագույն հետազոտողներից Խ.Կորոզլին ինքը ծագումով Իրանից լինելով՝ վերջին շրջանի իր ուսումնասիրություններում Խոձկոյի գրառած տարբերակի վերաբերմամբ նախապատվություն է տվել «վաղադրբեջանական» որակմանը: Սույն ուսումնասիրության մեջ Ադրբեջանական ԽՍՀ-ում գրառված պատումներից տարբերելու և քաղաքական նկատառումներով առաջացած տեղանվանական շփոթից խուսափելու նպատակով օգտագործել ենք «ատրպատականյան» եզրը:

Միջանկյալ և ծագումնաբանորեն մոտ մի օղակ է XXդ. 60-ական թթ. թուրքագետ Լ.Չլաիձեի հայտնաբերած թուրքերենի ատրպատականյան բարբառով (իրանական ադրբեջաներեն) 28 մեջլիսներից կազմված էպոսի տարբերակը, որը պայմանականորեն կոչվում է «Թբիլիսյան ձեռագիր»: Խ.Կորոզլու կարծիքով, այն գրառվել է XIXդ. երկրորդ կեսին և ավելի մի հին ձեռագրի պատճեն է (Короглы Х.Г., Взаимосвязи эпоса народов Средней Азии, Ирана и Азербайджана. М., 1983, с. 183): Պարսկերենի խիստ ազդեցությունն այս ձեռագրում թույլ է տալիս եզրակացնել, որ այն ևս Ատրպատականում է գրառվել:

առևանգելու և որդեգրելու մասին պատմող գլուխները<sup>3</sup>: Մասնավորապես, էպոսի ականավոր հետազոտողներից Բ.Կարրիևը հետևյալ կերպ է բնութագրել տվյալ հանգամանքը. «Այվազի (Ավազ, Օվեզ) առևանգման մոտիվն առավել հաստատուններից մեկն է և հանդիպում է բոլոր ազգային տարբերակներում: Մանրամասները, իրողությունները և աշխարհագրական անվանումները, հասկանալի է, փոփոխվում են կախված տեղից և միջավայրից, ուր որ տարածված է էպոսը»<sup>4</sup>:

Ընդհանրապես, էպոսներին բնորոշ առանձնահատկություններից օժանդակ հերոսի կերպարի առկայությունը թյուրքական վիպական ավանդության մեջ հստակ ընդգծվում է, ինչի արտահայտությունն են «հայրերի և որդիների» զույգ կերպարները համապատասխան էպոսներում՝ Ալփամըշ և Կարաջան, Յուսուֆ և Ահմեդ, Մանաս և Բակայ: Միննույն շարքը կարելի է դասել Քյոռոզլու և Այվազի (Գյոռոզլու և Ավազի) կերպարներն այն տարբերությամբ, որ որդեճնության

---

<sup>3</sup> Այվազի առևանգման և որդեգրման, ինչպես նաև «Քյոռոզլի» էպոսի զանազան տարբերակներում առկա այլ կայուն մոտիվներ բացակայում են հիմնականում միայն XXդ. սկզբի թուրք գրող Նիզամեդդին Նազրֆի մշակած տարբերակում, որը 1928թ. հրատարակվել է Ստամբուլում: Այն, ընդհանրապես, բավականին հեռացել է էպոսի մեզ հայտնի բոլոր տարբերակների ավանդականությունից, որոնց հետ պլուժեն կապվում է ընդամենը երկու հիմնական հերոսների՝ պատանի Քյոռոզլու և Բուլի քաղաքի կառավարչի (Բուլիբեյ) կերպարների առկայությամբ: Նազրֆի գեղարվեստականացրած (վերամշակած) տարբերակի սկզբնական աղբյուրների կամ առկա ավանդականության փոփոխման հիմքերի մասին ներկայումս ոչինչ հայտնի չէ: «Կարելի է միայն ենթադրել,- գրում է Խ.Կորոզլին,- որ վեպի գրառման հիմնական աղբյուրը եղել է առասպելական Քյոռոզլուի սիրանքների մասին մեզ անհայտ ևս մեկ բանահյուսական տարբերակ: Դա հաստատվում է տարբերակի տիպարանական վերլուծությամբ» (Короглы Х.Г., Новая версия “Кёроглу”, Теоретические проблемы восточных литератур, М., 1969, с. 93):

<sup>4</sup> Каррыев Б.А., Эпические сказания о Кёр-оглы у тюркоязычных народов. М., 1968, с. 60.

բացակայության պայմաններում Քյոռոլին ինքն է առևանգում և որդեգրում պատանուն: Անգավակության մոտիվն առկա է թյուրքական որոշ վիպական գրույցներում ևս, որոնցում գլխավոր հերոսը խնդիրը լուծում է հիմնականում գերբնական ուժերի միջոցով: Քյոռոլու անգավակության հանգամանքը, մանավանդ, արևելյան խմբի տարբերակներում բացատրվում է առասպելական փերիի հետ ամուսնությամբ, ինչն արդեն, ինքըստինքյան, բացառում է որդեծնությունը («Փերիի և մարդու միջև ամուսնությունը, որպես կանոն, անպտուղ է»): Անգավակության խնդրին համեմատաբար առավել ուշ ժամանակահատվածի հասարակական զարգացմանը բնորոշ լուծում է տրվում հենց Այվազի առևանգմամբ ու որդեգրմամբ, ինչով ապահովվում է անհրաժեշտ երկվության հանգամանքն էպոսում:

Հատկանշական է նաև որդեգրի անվան ծագումնաբանությունը, ինչը հիմնականում հանգում է արաբերեն «փոխարինող» իմաստին: Այսինքն, Քյոռոլին պետք է որ նման անվամբ պատանու առևանգեր և որդեգրեր: Ամեն պարագային բուն որդեգրման մոտիվը թյուրքական վիպական ավանդությանը բնորոշ չէ, ինչն առևանգման մասին գրույցներով առավել համահունչ է դառնում էպոսի առաջացման պատմական ժամանակահատվածում տեղի ունեցած իրադարձությունների հետ:

Արևմտյան խմբի մի շարք տարբերակներում՝ ատրպատականյան, թուրքական, հայկական, քրդական ևն, Այվազը (Էյվազ, Ավազ, Իվազ) մսագործի որդի է, որպես նրա ծննդավայր նշվում են Ուրֆան, Մտամբուլը (Սյյուտարը), Թոխատը և Կեսարիան: Ադրբեջանական էպոսում գեղեցիկ

<sup>5</sup> Короглы, 1983, с. 51.



պատանուն Քյոռոլին թուրքմենական թեքելյու<sup>6</sup> ցեղախմբից է փախցնում, որից և սերում է ինքը: Չանազան այլ պատումներում առկա է նաև երկրորդ որդեգրի կերպարը, որն Այվազի հետ համեմատած շատ հպանցիկ է ներկայացվում (Քենան, Հասան, Մուհամեդ ևն): Երբեմն որպես առևանգված պատանիներ են նշվում Քյոռոլու զինակիցներից ոմանք (օրինակ, Դեմիրչիօղլու, իմա՝ դարբնի տղա Հասանը): Այվազն ինքը առժամանակ անց դառնում է Քյոռոլու խմբի անդամներից՝ հանդես գալով որպես առավել վստահված և մերձավոր զինակից:

1830-ական թթ. Իրանի Ատրպատական (Ադրբեջան) երկրամասում Ալեքսանդր Խոճկոյի գրառած տարբերակով (ատրպատականյան կամ, այսպես կոչված, «վաղադրբեջանական») Քյոռոլին մտահոգվում է Չամլիբելում իր փոխանորդի հարցով, ինչի արդյունքում որոշում է ծպտյալ առևանգել Ուրֆա քաղաքից մսագործ Միր Իբրահիմի գեղերես որդուն (Այվազ Բալի): Վերջինիս հոչակը Չամլիբել է հասցնում արտաքին աշխարհում Քյոռոլու մերձավորներից առևտրական Խոջա-Յակուբը: Քյոռոլին ոչխարների հոտի առուծախի

---

<sup>6</sup> «Թեքելյուն» թեքի թուրքականացված ձևն է: Ցայժմ էլ Մուղանում (Իրան) տվյալ անվամբ հայտնի է շահսևանների ցեղախմբերից մեկը (Балаян Б.П., К вопросу общности этногенеза шахсеван и кашкайцев, Востокведческий сборник, No 1, с. 331-378, Ереван, 1960, с. 339): Ադրբեջանցի հեղինակների մոտ ակնհայտորեն թուրքմենական թեքելյու ցեղամիավորումը հաճախ ներկայացվում է որպես ադրբեջանական կապված պատմական Քյոռոլուն ադրբեջանցի և շալալիական շարժումները ներկայիս Ադրբեջանի տարածքում տեղի ունեցած լինելու տեսանկյունից ներկայացնելու ձգտման հետ: Ընդ որում, միանգամայն անհիմն և հանիրավի կերպով վկայակոչվում են ինչպես Քյոռոլու մասին վկայող պատմական աղբյուրները և էպոսի գանազան տարբերակները, այնպես էլ մի շարք ժամանակակից ուսումնասիրողներ (օրինակ, Тахмасиб М.Г., Проблема народности азербайджанских дастанов, Вопросы изучения эпоса народов СССР, Академия наук СССР, с. 176-187, М., 1958, с. 11, Рахмани А.А., Азербайджан в конце XVI и в XVII веке (1590-1700 годы), Баку, 1981, с. 156):

պատրվակով կարողանում է առևանգել պատանուն և փախուստի դիմել՝ ճանապարհին կռվի բռնվելով մսագործի հովանավոր կառավարիչ Ռեյհան-Արաբի հետ<sup>7</sup>, որն այլ տարբերակներով Այվազի հորեղբայրն է:

Ծագումնաբանորեն ատրպատականյան տարբերակին մոտ «Թբիլիսյան ձեռագրի» երրորդ մեջլիսում ուրֆացի մսագործ Միրիմի որդի Էյվազի մասին Քյոռոլուն կրկին պատմում է Խոջա-Յակուրը, ով մանրամասն նկարագրում է 14-ամյա պատանու գեղեցկությունը: Քյոռոլին հեռակա կարգով գմայլվում է նրա պատմածից, «սիրահարվում... և կորցնում հանգիստը», ապա հաջորդ օրն իսկ մեկնում Էյվազի հետևից, առևանգում նրան և հասցնում իր ոստան՝ կրկին մենամարտելով Ռեյհան-Արաբի հետ<sup>8</sup>:

Հատկանշական է, որ վերը նշված երկու դեպքում էլ Այվազը ոչ միայն դառնում է Քյոռոլու խմբի անդամ, այլև կատարում է գլխավոր մատովակի պարտականությունները: Սա արդեն թյուրքական իրականությանը և մշակույթին բնորոշ տարր է՝ դրանից բխող ուղեկից հանգամանքներով: Հայտնի է, որ թյուրք խաքանների և շահերի մոտ հաճախ մատովակները (սադի) գեղեցիկ պատանիներ էին լինում, ինչպես Այազը Մահմուդ Ղազնևիի մոտ (XII դ.)<sup>9</sup>: Էպոսի զանազան տարբերակներում

<sup>7</sup> Chodzko, p. 42-88.

<sup>8</sup> Король, 1983, с. 199-200.

<sup>9</sup> Ղազնևիների թյուրք-մահմեդական արքայատան ակնառու ներկայացուցիչ, 998թ.-ից էմիր և փառիշահ Մահմուդի մատովակ Այազը (Մալիք Այազ) ծագումով վրացի ստրուկ էր, Այմաք Աբու'ն-Նաջմի որդին: Ըստ պատմական աղբյուրների, վերջինս փաստացի Մահմուդ Ղազնևիի կողակիցն էր, առկա են նաև բազմաթիվ պոեմներ, որոնցում գովերգվում է Այազի նկատմամբ «սերը» (մի հանգամանք, որ լիովին բնորոշ է Քյոռոլուն վերագրվող Այվազի մասին մեզ հասած խաղերի բովանդակությանը): Այս գույզի մասին գրույցներն իրենց ամփոփումն են ունեցել նաև սուֆիական և մահմեդական Հնդկաստանի գրականության մեջ, Ղազնևին ինքը բնութագրվել է որպես «իր ստրկի ստրուկ» (Neill J., *The Origins and Role of Same-Sex Relations in Human Societies*, McFarland, Jefferson NC, 2008, p. 308): Այազը կարևոր դերակատարություն ուներ արքունիքում, ստանձնել է նաև զինվորական

նույնպես գեղերես Այվազը հաճախակի է կատարում մատովակի պարտականությունները, թեև ձևականորեն որդեգրված է հերոսի կողմից<sup>10</sup>:

Հայկական միակ հրատարակված տարբերակում (Ուրմիայի քարքառով) Էյվազ-Բալիի առևանգումը Խոձկոյի գրառած ատրպատականյան տարբերակի պես է ներկայացվում, ընդամին, քացատրվում Քյոռոզլու և Նիգյարի անգավակության հանգամանքով: 8-10 տարեկան որդեգիրը Կեսարիայից է

պաշտոններ Ղազնևիի բանակում: 1021թ. Ղազնևին Այազին է հանձնում Լահոռի գահը՝ նրան դարձնելով տեղի առաջին մահմեդական կառավարիչը: Այազը վերաշինում է ավերված քաղաքը՝ այն դարձնելով առևտրի և մշակույթի կենտրոն: Ժամանակին նրա անվամբ Այազաբադ է կոչվել Լահոռին մերձակա ներկայիս Գուշար-Խանը: Մահացել և թաղվել է Լահոռում, գերեզմանն ավերվել է սիկների կողմից 1811թ.:

Ընդհանրապես, վրացի գեղերես պատանիների հռչակն ավելի ուշ տարածված էր մահմեդական Արևելքում, մանավանդ, Սեֆևյանների արքունիքում հիշատակվում են վրացի սպասավորները («ղոլամ») և մատովակները (Allsen T., *The Royal Hunt in Eurasian History*, University of Pennsylvania Press, 2006, p. 264):

Կարելի է ենթադրել նաև որոշակի կապ Ղազնևի-Այազ և Քյոռոզլի-Այվազ զույգերով հանդես եկող կերպարների միջև, մանավանդ, որ Մահմուդ Ղազնևու մասին գրույցները «Քյոռոզլի» էպոսի ձևավորման ժամանակահատվածում էլ տարածված էին, հատկապես, Կենտրոնական Ասիայում: Քյոռոզլին ինքն էպոսում հանդես է գալիս որպես հանպատրաստից բանաստեղծ-երգիչ, աշուղ, իսկ պատմական Քյոռոզլու մասին առկա է ուշ միջնադարի հայ պատմագրության նշանավոր ներկայացուցիչ Առաքել վարդապետ Դավրիժեցու եզակի վկայությունը. «Քոռոզլի, այս այն Քոռոզլին է, որ բազում խաղ է ասացեալ գոր այժմ աշղներն եղանակեն» (Առաքել Դավրիժեցի, Գիրք պատմութեանց, աշխատասիրութեամբ Լ.Խանլարեանի, Երևան, 1990, էջ 108): Երկու դեպքում էլ առկա են գեղերես պատանուն նվիրված սիրային խաղեր, և երկու դեպքում էլ պատանիները մատովակներ են, ապա՝ տիրոջ հավատարիմ ծառաներ ու մարտիկներ: Առավել հետաքրքիր է, որ ինչպես Ղազնևու Այազը, այնպես էլ ուզբեկական, դազախական և թուրքմենական որոշ պատմամներում որդեգիր Այվազ-Ավազը ևս վրացի է կամ կապված է Կրաստանի (Գուրջաստան) հետ: Այսինքն, Քյոռոզլու առևանգած գեղերես պատանին պետք է որ անպայման նման անուն կրեր:

<sup>10</sup> Кор-Оглы Х.Г., *Огузский героический эпос*, М., 1976, с. 161.

(Ղայսարի), տեղացի մսագործի որդին: Առևանգման դրվագը կրկնում է ասորպատականյան և թուրքական տարբերակներում հանդիպող գրեթե բոլոր մանրամասները՝ մսագործի ազահությունը, Քյոռոզլու խորամանկությունը՝ ոչխարների առուծախի պատրվակով, պատանու նախազգուշացումը հորը և նրա ունկնդիր չլինելը են<sup>11</sup>:

Քրդական պատումներից նմանապես հայտնի է Այբազ Բալու առևանգման դրվագը, թեև այս դեպքում Քյոռոզլին գործում է Դալի Հասանի հետ, իրենց խմբում «մի գրագետ մարդ» ունենալու մտահոգությամբ: Այբազը 14 տարեկան է, Թավրիզից, մսագործ Ալիի որդին, առևանգման մանրամասները կրկին նույնն են, մանավանդ, ոչխարների հետ յուրօրինակ փոխանակման պահով: Քյոռոզլին մսագործին հատուկ շեշտում է, որ «տղայիդ արյան գինն ենք տվել, նրան պիտի տանենք»<sup>12</sup>:

Թուրքմենական պատումներում մսագործի գեղերես որդի Օվեզը (Ավազ՝ ուզբեկների և տաջիկների, Աուեզ՝ դազախների, Ավիզ՝ Բուխարայի արաբների մոտ) իրանցի է, ծառայում է Վենեզամ քաղաք-ամրոցի (երկրի) տիրակալ Յուսուփ-շահի պալատում (այլ պատումներում՝ Խունկարի, որն ուզբեկական տարբերակով Գուրջաստանի արքան է): Պատանու առևանգման մասին պատմող շահան ևս ծագումնաբանորեն հանգում է էպոսի արևմտյան խմբին: Կան Օվեզին նվիրված նաև այլ շահաներ (դաստաններ), ինչպես «Օվեզի հարսանիքը», «Օվեզը նեղացած», «Օվեզը կախադանին» են:

Արևելյան խմբի տարբերակներում Գյոռոզլին որդեգրում է նաև առևանգված դարբնի որդի Հասանին (Էր-Հասան, Դյալի

<sup>11</sup> Քյոռ-Օղլի, ժողովրդական վիպասանություն, հավաքեց և գրի առավ Գ. Թարվերդյան, առաջաբանը՝ Խ.Սամվելյանի, Երևան, 1941, էջ 136-142:

<sup>12</sup> «Քյոռոզլի» էպոսի քրդական պատումները, գրառում, թարգմ. և ներածություն Ն. Ջնդիի, Երևան, 1953, էջ 115:

Հասան, դազախական տարբերակում՝ Խասեն), որը կրկին նվազ հանրաճանաչ է, քան Օվեգ-Ավազը<sup>13</sup>: Ղազախական տարբերակում թեև խոսվում է Ավազի որդեգրման մասին, սակայն տվյալ իրադարձությանը նվիրված հատուկ դաստանը բացակայում է: Տաջիկական պատումներում Քյոռոզլու (Գուրուզլի, Գուրգուլի, Կուրուզլի) որդեգիրները երեքն են՝ Ավազը, Շոդմոնը և Հասանը, իսկ Ավազը Չամբուլի մաստոն երկրի գլխավոր հսկան է<sup>14</sup>: Ուզբեկական «Գորոզլի» և տաջիկական «Գուրգուլի» էպոսներում իրեն նվիրված դաստանների շարքով Ավազը գրեթե կենտրոնական կերպար է դառնում՝ հաճախ դուրս մղելով գլխավոր հերոսին: Մասնավորապես, ուզբեկական տարբերակում որդեգիր հերոսների երկրորդ սերնդին ծագումնաբանական կարգով հետևում են երրորդը և չորրորդը՝ Ավազի և Հասանի որդիներ Նուրալին և Ռավշանը, Նուրալու որդի Ջահանգիրը (Գորոզլու ծոռը): Կարակալպակյան տարբեր պատումները հիմնականում կրկնում են ուզբեկական կամ թուրքմենական տարբերակները: Գլխավոր հերոսի այս ժառանգներին նվիրված դաստանները, բնականաբար, ավելի ուշ ժամանակաշրջանի ծնունդ լինելով՝ զուտ վիպական-հերոսական բնույթ են կրում<sup>15</sup>:

Առնանգման մոտիվն ակնբախորեն առկա է էպոսի բոլոր տարբերակներում (թերևս, բացի տոբոլ-թաթարականից), նույնիսկ այն տարբերակներում, որոնցում խոսք կա Քյոռոզլու հարազատ որդու (կամ որդիների) մասին: Հատկապես, թուրքական պատումներում առավել կերպավորվում է Քյոռոզլու հարազատ

<sup>13</sup> Жирмунский В.М., Зарифов Х.Т., Узбекский народный героический эпос, М., 1947, с. 227.

<sup>14</sup> Короглы, 1983, с. 23.

<sup>15</sup> Жирмунский В.М., Народный героический эпос. М.-Л., 1962, с. 217, Короглы, 1976, с. 40-43.

որդի Հասանի կերպարը, ինչը բացակայում է ադրբեջանական և թուրքմենական տարբերակներում<sup>16</sup>, սակայն առևանգված Այվազի կերպարն անհամեմատ առավել գերիշխող է: Անբնական է, սակայն առևանգվող և որդեգրվող պատանիներից և ոչ մեկը որք չէ: Ավելին, թե՛ արևմտյան, թե՛ արևելյան խմբերի տարբերակներում համանման կերպով է պատմվում նրանց ծնողների մասին: Թուրքական պատումներում Այվազի հարազատ հայրը մսագործների ավագը (կասաբբաշի) լինելով՝ նաև սուլթանական պաշտոնյա է, անգամ օգնական գործ է ստանում և հետապնդում Քյոռոլուն՝ սեփական որդուն ազատելու նպատակով: «Թբիլիսյան ձեռագրում» Քյոռոլուն հետապնդող Այվազի հորեղբայր Ռեյհան-Արաբը մենամարտում չկարողանալով հաղթել հակառակորդին՝ հիանում է նրա քաջությամբ և եղբայրանում, ապա «թույլ տալիս նրան պատանուն տանել որպես եղբայր»<sup>17</sup>: Մի հանգամանք, որ բացարձակ անբնական է թվում և բավարար բացատրություն չի տրվում ասացողի կողմից:

Այվազն ինքը հաճախ ներկայացվում է որպես իր ընտանիքի միակ զավակ, ավելին՝ արդեն իսկ որդեգրված անզավակ մսագործի կողմից: Արևմտյան և արևելյան խմբերի որոշ պատումներ նույնիսկ հեռավոր աղոտ ակնարկներ են պահպանում պատանիների առևանգման և, մասնավորապես, Քյոռոլուց Այվազի (Օվեզ) ունեցած խռովքի մասին պատմող դրվագներում: Ընդամին, բոլոր դեպքերում էլ հարցը վերաճում է դիմակայության Քյոռոլու և Այվազի միջև, ով նույնիսկ չի խորշում անցնել թշնամիների կողմը և պատերազմելու պատրաստվել:

Տվյալ դրվագը, թերևս, առավել մանրամասն պատճառաբանված է ներկայացվում «Թբիլիսյան ձեռագրում»,

<sup>16</sup> Каррыев, с. 85.

<sup>17</sup> Короглы, 1983, с. 216-217.

որում սկզբից նեթ շեշտվում է Քրոնոլոլու կանանց խանդն Էյվազի նկատմամբ: Թեև Քրոնոլլին պատանուն իր ոստան էր բերել «որպես եղբայր», սակայն առանձնահատուկ ուշադրություն էր տաճում՝ նրան անվերջ սիրային գազելներ նվիրելով և առաջացնելով կանանց կասկածները: Մի առիթով դրանք հաստատվում են, էրբ գինարբուքի ժամանակ Քրոնոլլին ուժգին գինովցաճ և «Էյվազի գեղեցկությանը հմայվաճ» հրամայում է գինի մատուցել ու համբուրում է նրան: Պատանին հատակին է նետում Քրոնոլլու սազը, վիրավորվաճ հայտարարում, թե ինքը տղամարդ է և այդպիսին էլ կմնա, ինչից զայրացաճ Քրոնոլլին նրան պատժում է: Էյվազը փախուստի է դիմում և ապաստանում Նազար Չալալու<sup>18</sup> մոտ, ով ինքն էր ցանկանում Էյվազին Վան քաղաքի իր պալատում որպես մատուկակ պահել: Արդյունքում Քրոնոլլին հարձակվում է

---

<sup>18</sup> Նազար Չալալի կերպարն առկա է միայն Խոճկոյի տարբերակում և «Թրիլիայան ձեռագրում» հանդիսանալով Էպոսում ջալալիների ապստամբության վերհուշի եզակի արտահայտություն: Միայն վերջին դեպքում առկա է նաև գլխավոր հերոսի «Չալալի Քրոնոլլի» անվանումը, ինչը, սակայն, կապվում է, իբր, համանուն թուրքմենական ցեղախմբի հետ (Kopozև, 1983, c. 184-191): Խոճկոյի մոտ Նազար Չալալին թուրքմենական թերեջիմե ցեղախմբից է, աչքի է ընկնում քաջությամբ և լավ պատերազմող է, իր 12 հազար հեճալներով մեկնում և մարտարվեստ է ուսանում Քրոնոլլու մոտ: Նրա պատվին կազմակերպվաճ խնջույքում Քրոնոլլին պատվիրում է Այվազին գինի մատուցել, ինչից վերջինս վիրավորվում է և հեռանալով՝ ապաստանում գլխավոր հերոսի վաղեմի հակառակորդ Բոլիբեկի մոտ, մի դրվագ, որ հաստատուն տեղ ունի «Թրիլիայան ձեռագրում»: Նազարը Քրոնոլլուն օգնության է հասնում Բոլիբեկի հարձակման ժամանակ և հաղթությունից հետո խորհուրդ տալիս ազատել գերյալներին (Chodzko, p. 259-281): «Թրիլիայան ձեռագրում» Քրոնոլլին Այվազի պատճառով գժովում է Նազար Չալալի հետ և սպանում վերջինիս (Kopozև, 1983, c. 241-242), ինչն, ըստ ամենայնի, ջալալիների միջև ժամանակին տեղի ունեցաճ երկպառակտչական կռիվների արձագանքն է: XVII մեջլիսում առկա է Հասան Չալալու կերպարը, ինչը որևէ ազգակցություն չունի, իբր, համանուն թուրքմենական ցեղախմբից սերող Չալալի Քրոնոլլու հետ, այսինքն՝ ակնհայտորեն մատնանշվում է տվյալ կերպարի կապը ջալալիական ապստամբությունների հետ (անդ, էջ 236-238):

Նազարի վրա, սպանում նրան և հետ վերադարձնում էյվազին<sup>19</sup>: Վստահաբար ծագումնաբանորեն նույն հենքին է հանգում թուրքմենական էպոսի «Օվեզը նեղացած» ինքնուրույն շահան: Ընդհանրապես, թուրքմենական և ուզբեկական տարբերակներում էլ Օվեզի խռովքը նույն կերպ է պատճառաբանվում, միայն թե Գյոռոզլու փոխարեն գինովցած է լինում վերջինիս զինակից Թուլումբայը, որից երիտասարդը վրեժ է լուծում<sup>20</sup>:

Ժամանակին դեռ թուրք բանագետներից Ն.Փ.Բորաթավն է նկատել թուրքական պատումներում հայկական կերպարների առկայությունը, ինչպես Քաչալ Համգան (Քիչել Հեմգե, երբեմն ուղղակի՝ Էրմենի Համգա), Բեզիրգեն-վաճառականը ևն<sup>21</sup>: Տարբեր պատումներում, մասնավորապես, Կեսարիայի, հայ է ներկայացվում հենց Քյոռոզլու որդեգիր Այվազը: Ի վերջո, Բորաթավը թուրքալեզու հայ աշուղների ազդեցությանն է վերագրում հայազգի կերպարների, այդ թվում՝ նաև Այվազի, նման հաճախադեպ հիշատակությունները<sup>22</sup>, ինչի հետ չի համաձայնվում ֆրանսահայ բանասեր Պերպերյանը. «Մեր զգացումը այն է, որ թուրքերեն լեզուով պատմուած գրոյցներու եւ վեպերու մէջ հայ հերոսներու գոյութիւնը արդիւնք չէ հայ աշուղներու ազդեցութեան, այլ հայկական եւ թրքական գրոյցներու ձուլման, զոր հայ աշուղները կատարած են»<sup>23</sup>: Պերպերյանի

<sup>19</sup> Անդ, էջ 241-242:

<sup>20</sup> Անդ, էջ 242:

<sup>21</sup> Boratav Pertev Naili, Köroğlu Destanı, Bütün Eserleri - 6, BilgeSu, Ankara, 2016, s. 54, 71.

<sup>22</sup> Անդ, էջ 126:

<sup>23</sup> Պերպերեան Հ., Արշակ Բ. եւ Քեռոզլու, Փարիզ, 1938, էջ 42: Ամեն պարագային ակնհայտ է հայ աշուղների դերը «Քյոռոզլի» էպոսի կազմության գործում: Մ.Արեղյանի ընդգծմամբ, «մինչև 16-րդ եւ 17-րդ դարի մէջ... իրօք մի դիւցազնական վիպական շրջան է եղել մեզ համար, մեզ հետ եւ մեր դրացի թուրքերի համար, կազմուել են նոր վեպեր, մասամբ հայերի ձեռով, Քեռոզլուի,



հաղորդմամբ ևս, «դիցազնավեպին տարբերակներէն մէկուն մէջ Այվազ ալ Հայ մըն է, եւ Պ.Ա.Սազըզեան կը հաղորդէ թէ Կեսարիոյ շրջանին մէջ ալ Այվազ իբր հայ ճանչցուած է»: Ապա իրավամբ եզրակացնում է. «Եթէ հայ աշուղները ազգասիրաբար Հայերու պատուաբեր դերեր վերագրել ուզած ըլլային, ինչպէս կը թուի խորհիլ Պ. Պորաթաւ, Այվազը իբր Հայ {չէին} ներկայացներ, որովհետեւ Այվազ շատ ալ պատուաբեր տիպար մը չէ»<sup>24</sup>: Հասկանշական է նաև, որ թուրքական և այլ պատումներում, բացի Կեսարիայից, որպէս Այվազի ծննդավայրեր են նշվում ժամանակի հայաբնակ այլ տարածքներ ևս, ինչպէս Ուրֆան և Թոխատը:

Հարկ է նշել, որ նույնիսկ Կենտրոնական Ասիայում գրառված որոշ պատումներում Այվազը որպէս քրիստոնյա է ներկայացվում: Այսպէս, ուզբեկական «Ավազխան» պատումում որդեգրի հարազատ հայր Բուլդուրուկ մսագործը ծառայում է Գուրջաստանի արքա Խունկարի մոտ, դազախական տարբերակում՝ Աուեզը Կործաստանի խան Բուլդուրիկի որդին է, սակայն ծնված թուրքմենուհուց<sup>25</sup>: Այլ ազգային պատումներում Գյոռոզլին Գուրջիստանից Ավազի կնության համար բերում է Գուրջիստանի շահ Լեկեի դուստր Գյուլ-Ռուհին<sup>26</sup>: Ընդհանրապէս, այս երկրանունը (Գուրջիստան, Գուրջաստան, Կործաստան ևն) Կենտրոնական Ասիայում նույնացվում էր ոչ թէ միայն կոնկրետ Վրաստանի, այլև ամբողջ Կովկասի հետ<sup>27</sup>: Ինչպէս Վ.Ժիրմունսկին

---

Շահխամայիլի եւ այլն մասին» (Աբեղեան Ս., Հայ ժողովրդական վեպը, Թիֆլիս, 1908, էջ 19):

<sup>24</sup> Պէրպէրեան, էջ 42: Միննույնը վերաբերվում է նաև Համգայի կերպարին, որն էպոսի բոլոր տարբերակներում բացասաբար է ներկայանում:

<sup>25</sup> Каррыев, с. 237.

<sup>26</sup> Անդ, էջ 217:

<sup>27</sup> Гер-оглы, Туркменский героический эпос, составитель Б.А.Каррыев. М., 1983, с. 794.

Է ժամանակին նկատել, Կենտրոնական Ասիայում տարածված էպոսներում և հերոսական սաքերում որպես հակառակորդ են հանդես գալիս թյուրքերի պատմական թշնամի «հեթանոս» կալմիկները, իսկ Կովկասից՝ Գուրջիստանի (Վրաստան) «գյաուր» քրիստոնյաները, ինչպես Բամսը-Բեյրեքին և նրա 40 հեծյալներին նենգաբար բռնած Բայբուրդ (հայկ. Բաբերդ) ամրոցի տերը<sup>28</sup>:

Տվյալ դեպքում որոշակիորեն ակնհայտ է հայ մատենագիրների կողմից ջալալիների և, մասնավորապես, Քյոոզլու մասին հաղորդած տեղեկությունների և էպոսում հիշատակվող դեպքերի միջև գոյություն ունեցող կապը: Միանգամայն հնարավոր կարելի է համարել, որ հենց XVI-XVIIդդ. տեղի ունեցած ջալալիների ապստամբությունների ժամանակահատվածում արձանագրված պատմական իրողություններն են բանահյուսական ձևափոխման ենթարկվելով՝ իրենց գեղարվեստական արտացոլումը գտել էպոսի զանազան տարբերակներում պատանիների առևանգման ու որդեգրման մոտիվների առկայությամբ:

Վիպական Քյոոզլու և նրա զինակիցների պատմական նախատիպերի, ինչպես նաև նրանց գործունեության տարածքի հարցը որոշելու տեսանկյունից առավել արժանահավատ և վավերական պատմական աղբյուրներ են հանդիսանում Օսմանյան կայսրության պետական արխիվներում պահվող և XVIդ. վերջով թվագրվող փաստաթղթերը (Mühimme Defterleri), որոնք հիմնականում հրամանագրեր են և նահանգային իշխանությունների զեկույցներ: Ընդամին, 1579-81թթ., 1588թ. և 1593-95թթ. Բոլիի, Գերեդեի, Իչելի, Կարամանի, Անատոլիայի այլ շրջանների բարձրաստիճան պաշտոնյաներին հասցեագրված հրամանագրերում նկարագրվում են Քյոոզլու և նրա

<sup>28</sup> Жирмунский, 1962, с. 213.

գործակիցների ավագակային գործողությունները, նշվում դրանց վերացման անհրաժեշտությունը: Մասնավորապես, 1580-ով թվագրվող հրամանագրում՝ ուղղված Բուլի կառավարչին (Էպոսի հիմնական տարբերակներում՝ հերոսի գլխավոր հակառակորդը) և Գերեղեյի ղադիին՝ խոսվում է Քյոռոլու կողմից կատարված ավագակային գործողությունների և, որ առավել հետաքրքիր է, նրա կողմից գեղեցիկ պատանու առևանգման մասին: 1579-81թթ. փաստաթղթերում ևս նշվում է, որ Բուլի (Բալու) կառավարիչը (Էպոսում՝ Բուլբեկ) փրկագին վճարելով՝ նպաստել է Քյոռոլու կողմից պատանդ վերցվածի ազատմանը: Հատկանշական է ավելի ուշ՝ 1588թ. փաստաթղթում որպես Քյոռոլու մերձավոր զինակից հիշատակվող ոմն Իվագի մասին տեղեկությունը, ինչը կարող է խոսել վիպական Այվազի պատմական նախատիպի գոյության մասին: Չօգուտ տվյալ ենթադրության է ժամանակին արտահայտվել նաև Էպոսի խոշորագույն հետազոտողներից Խ.Կորոգլին<sup>29</sup>:

Վերոհիշյալն, ընդհանրապես, առավել հավանական է թվում, քան թե Բ.Կարրիևի ժամանակին հայտնած ենթադրությունը: Ելնելով իր ժամանակահատվածում գերիշխող պնդումից, թե Ատրպատականում XVI-XVIIդդ. տեղի ունեցած պատմական իրադարձություններն են նաև ընկած Քյոռոլու մասին ասքերի հիմքում, Կարրիևը ենթադրում է Հասան-բեկ Ռումլույի (XVIդ.) կողմից հիշատակվող 1571-74թթ. Թավրիզում բռնկված խռովությունների ղեկավարներից ոմն Ավագ փահլևանի՝ վիպական Այվազ-Օվեզի պատմական նախատիպ լինելը<sup>30</sup>: Այնինչ ակնհայտ է, որ նման զուտ անվանական նույնացումը նվազ

<sup>29</sup> Короглы Х.Г., Туркменский эпос “Тёр-оглы” и особенности его историзма, Специфика фольклорных жанров. М., 1973, с. 144

<sup>30</sup> Карриев, с. 17.

հավանական է, քանի որ նշված պատմական անձնավորության վերաբերյալ բավականաչափ հայտնի տեղեկություններ աղբյուրներում չկան, և այլ բանահյուսական ստեղծագործություններում ևս հայտնի չէ նրա անունը:

Քյոռոզլուն գուտ անվանապես, որպես նշանավոր ավագակի, իր ուղեգրություններում («Սեյահեթ-նամե»), մասնավորապես, Ստամբուլից Վան ճանապարհորդելու ընթացքում (Չերքեշի շրջանում, ներկայիս Չանքըրլյի մոտ) հիշատակում է XVIIդ. թուրք պատմիչ Էվլիյա Չելեբին (Ե հատորում), սակայն առանց որևէ հավելյալ մանրամասնության: Ճիշտ է, մեկ այլ առիթով ի շարս այլոց՝ հիշատակվում է նույն անվամբ բանաստեղծ (Ա հատորում), սակայն ակնհայտ է, որ Քյոռոզլին, այնուամենայնիվ, որպես «հայդուր» (ավագակ) է հոչակված եղել<sup>31</sup>:

«Քյոռոզլի» էպոսի հետ կապված բազմազան արժեքավոր տեղեկություններ է հայտնում XVIIIդ. հայ մատենագիր Եղիա Մուշեղյանը (որոշ վավերագրերում՝ Եղիա Աստվածատրյան կամ Եղիա Կարնեցի)<sup>32</sup>, իր՝ 1721թ. Թավրիզում գրված «Գիրք խաղից

<sup>31</sup> Boratav, s. 159, 198.

<sup>32</sup> Եղիա Մուշեղյանը (Եղիա Աստվածատրյան, նաև՝ Եղիա Կարնեցի, 1689-1750/51) թողել է բավական հարուստ գրական ժառանգություն, որը ձեռագիր մի քանի հատոր է կազմում: 1724թ. Ռուսաստան և Արևմտյան Եվրոպա ճանապարհորդելիս պարսից օգոսին լրտեսություն իրականացնելու կեղծ ամբաստանությամբ Եղիան ձերբակալվում է ռուսական իշխանությունների կողմից և տարվում Մոսկվա, ուր եռամյա բանտարկությունից հետո միայն արդարացվում և ազատ է արձակվում: Հենց այս ձերբակալության ժամանակ նրանից առգրավվում են բազմաթիվ ձեռագրեր, որոնց թվում և մեզ հետաքրքրող տաղարանը, ուր ժողովված են հայ, պարսիկ և թուրք բանաստեղծների և, որ առավել կարևոր է, հայատառ թուրքերենով գրված Քյոռոզլուն վերագրվող 13 խաղեր: Եղիայի ազատ արձակվելուց հետո ձեռագրերը չեն վերադարձվում և այդ կերպ, ի վերջո, հանգրվանում Ռուսաստանի արտաքին քաղաքականության արխիվում: 1937թ. տաղարանը հայտնաբերել են Ա.Արբահամյանը և Դ.Գաբրիելյանը, ովքեր էլ վերծանելուց հետո 1954թ. հրատարակել են վերոհիշյալ խաղերը (Արբահամյան Ա., Գաբրիելյան Դ., Քյոռ-օղլու նորահայտ երգերը, Հայկ. ՍՍՌ ԳԱ Տեղեկագիր, հասարակական գիտություններ, էջ 71-93, Երևան, 1954, էջ

երաժշտականաց» տաղարանում: Մասնավորապես, ուշագրավ է Եղիա Մուշեղյանի հաղորդումը Քյոոզլու կողմից պատանիներ առնանգելու մասին. «Ապստամբ էր թագաւորէն: Պատմութիւն սորա բագում է, աստ անտեղ է գրե՛ալ: Ամէն գեղեցիկ տղայ եւս առեալ եւ փախեալ էր ի քաղաքէն, վասն որոյ բագում գովասանութիւն ասացեալ է, ըստ կարի մերում լուեալն գրեցաք»<sup>33</sup>: Հայ մատենագրի վկայությունը (մոտ 140 տարի անց) անգամ զրուցախառն-առասպելական շերտի ձևավորմամբ ուղղակիորեն հաստատում է թուրքական աղբյուրների հաղորդումների վավերականությունն ու պատմականությունը:

Եղիան չի նշում, թե կոնկրետ ո՛ր քաղաքից է Քյոոզլին պատանիների առնանգումն իրականացրել: «Ասմունք Քոոզլուն» հատվածում, թեև Այվազի անունը բացակայում է, սակայն այն հիշատակվում է տաղարանում զետեղված Քյոոզլուն վերագրվող խաղերում<sup>34</sup>: Ընդ որում, տաղարանի բնագրում առկա «Այվա՛զ, Քոոզլուն յեարիսան» տողը ուսումնասիրողների կողմից սխալ կարծվելով՝ կամայականորեն փոխարինվել է «Նիգա՛ր, Քոոզլուն յեարիսան»-ով<sup>35</sup>, ինչն անթույլատրելի է, մանավանդ, եթե խոսքը թուրքական (թյուրքական) մշակույթից և բարբերից բխող երևույթի մասին է<sup>36</sup>: Համենայն դեպս, ի տարբերություն Այվազի՝ էպոսում

---

71-93): Սակայն պատմական-աղբյուրագիտական առավել մեծ արժեք է ներկայացնում տաղարանում միջանկյալ կարգով գրի առնված «Ասմունք Քոոզլուն» հատվածը, որում Եղիան ամփոփ կերպով արձանագրել է ժողովրդի մեջ Քյոոզլու վերաբերյալ շրջող զրույցները:

<sup>33</sup> Քյոո-Օղլի, ժող. վիպ., էջ 12:

<sup>34</sup> Աբրահամյան, Գաբրիելյան, էջ 76, 88, 92:

<sup>35</sup> Անդ, էջ 76:

<sup>36</sup> Թուրք հեղինակների կողմից նշված տողը հրատարակվել է բնագրի համաձայն, ինչպես որ տրվում է Եղիա Մուշեղյանի կողմից (օր., Uzun E., Köroğlu, Trabzon, 1997, s. 182):

որպես Քյոռոզլու կին հանդես եկող Նիգյարի անունը Եղիայի տաղարանում, ընդհանրապես, չի հիշատակվում:

Համեմատական կարգով նշենք, որ Այվազին նվիրված բազմաթիվ խաղեր կան ինչպես Էպոսի արևմտյան, այնպես էլ արևելյան խմբերի տարբերակներում, դրանք հաստատուն կերպով տեղ են գտել աշուղների և բախշիների երգացանկում: Բանասերների գնահատմամբ, դրանց մի մասը գրառված է հենց XVI-XVIIդդ. փոքրասիական աշուղների գործածած թուրքերենով<sup>37</sup>: Նիգյարի մասին խաղերն առավել ուշ են գրառվել, և դրանցում առկա է առավելապես ավելի ուշ շրջանի թուրքերենի ազդեցությունը, ինչը կարող է վկայել, որ Այվազի համեմատ Նիգյարի կերպարն Էպոսում ավելի ուշ շրջանի հավելում է<sup>38</sup>: Ընդհանրապես, եթե արևմտյան և արևելյան տարբերակներում որդեգրի կերպարը հիմնականում Այվազով է ներկայացվում, ապա գլխավոր հերոսի կնոջ պարագային այն միանգամայն տարբեր է, իսկ երբեմն խոսք է գնում մի քանի կանանց և նույնիսկ Քյոռոզլու

<sup>37</sup> Այվազին նվիրված և ավելի վաղ գրառված թուրքական որոշ խաղերում առկա են նաև թվական հիշատակություններ, որոնցից մեկը մատնանշում է նաև աշուղ Ջամալին (Մկրտիչ Տայյան). «Իսկ մի երգ էլ ունի Քոռոզլին ասած, որտեղ ասում է այսպես. «Քոռոզլին եմ 1018 թուին ցոյց տուի Այվազ-խանին սարերը»: Այս երգի մեջ յիշուած թիւը, տաճկական թուականն է: Ուրեմն... Քոռոզլու լոյս ընկնելը գալիս է 1600 թուականներին» (Քոռոզլու հեքիաթը. Գզիր Օղլու եւ Պօլի Բէկի հետ պատահած անցքերը, փոխադրեց տաճկերէնից հայերէն Մկրտիչ Տալեանց Աշըգ Ջամալին, Մասն առաջին, Թիֆլիզ, 1897, էջ II):

<sup>38</sup> Ադրբեջանական տարբերակում (Ադրբեջանական ԽՍՀ-ում հրատարակված) անգավակ մնացած Նիգյարն ինքն է Քյոռոզլուն դրդում Այվազի առևանգմանը՝ աշուղ Ջունունից տեղեկանալով նրա մասին: Քյոռոզլին կատարում է կնոջ փափագը և Չենլիբելի հասցնում պատանուն (Кёрогу. Азербайджанский народный эпос, составитель М.Г.Тухмасиё, Изд-во АН Азербайджанской ССР, Баку, 1959, с. 114-141): Միննույն կերպ՝ Նիգյարի փափագով է բացատրվում պատանու առևանգումն Ուրմիայի բարբառով գրառված հայկական տարբերակում (Քյոռ-Օղլի, ժող. վիպ., էջ 136): Այստեղ, կարծես, տրամաբանական բացատրություն է տրվում Քյոռոզլու անբնական գործողությանը: Միննույն կերպ Գյոռ-օղլուն որդեգրության է դրդում կին-փերի Աղա-Յունուսը, ինչն առկա է Չարջուու շրջանում գրառված թուրքմենական պատումներից մեկում (Карриев, с. 155-156):

հարեմի մասին, ինչպես «Թրիլիայան ձեռագրում»<sup>39</sup>: Նմանապես եթե Այվազի կերպարն իրական գույներով է ներկայացվում առևանգման դրվագով, ապա Քյոռոլլու կնոջ կերպարը համեմատաբար անհամոզիչ է՝ արևելյան տարբերակներում նա երբեմն առասպելական փերի է, իսկ արևմտյան տարբերակներում՝ հիմնականում ավազակի կողմից առևանգված մեծատոհմիկի, առևտրականի, անգամ՝ թուրքական (Ստամբուլի) սուլթանի դուստր:

Առավել տարածված է Այվազի առևանգման մասին Քյոռոլլու մի խաղը, որում գլխավոր հերոսը դիմում է իրեն հետապնդողին՝ առևանգված պատանու հորը, և առաջարկում ոչխարների հոտը որդու փոխարեն. «Կասաբ-բաշի, Կասաբ-բաշի, Քոյուն սենին, Այվազ բենիմ...» («Ավազ մսագործ, ավազ մսագործ, ոչխարը՝ քեզ, Այվազն՝ ինձ...»), ինչը հայտնի է դեռևս XIXդ. փոքրասիական թուրքերից հունգարացի թուրքագետ Իգնաց Կունոշի գրառած տարբերակով<sup>40</sup>: Միննույն խաղը նույն տարածաշրջանում պահպանվել և գրառվել է ավելի ուշ ևս (օրինակ, Էլազիզի պատումներից). «Kasapbaşı Kasapbaşı / Sürü senin Ayvaz benim...» («Ավազ մսագործ, ավազ մսագործ, հոտը՝ քեզ, Այվազն՝ ինձ...»)<sup>41</sup>: Քյոռոլլին մի անբնական կերպով, կարծես, փրկագին (քրդական տարբերակով՝ «արյան գին») է առաջարկում իր առևանգած պատանու փոխարեն, այն էլ իրեն հետապնդող հորը, որն, ի վերջո, համակերպվում է կատարվածի հետ կամ չի կարողանում հասնել Քյոռոլլուն: Հատկանշական է, որ հին թուրքերի շրջանում գոյություն է ունեցել անմորուս պատանիների նկատմամբ

<sup>39</sup> Короглы, 1983, с. 197.

<sup>40</sup> Радлов В.В., Образцы народной литературы тюркских племен. Часть VIII. Наречия османские, тексты собраны И.Куношем, СПб., 1899, с. 8.

<sup>41</sup> Boratav, s. 322.

անառակաբարո գործողությունների դիմաց ոչխարներով փրկագնվելու հայտնի կարգ, ինչի մասին հաղորդում է Յդ. արաբ պատմիչ Ահմադ իբն Ֆադլանը, և վերոհիշյալը միանգամայն կարող է կապակցվել տվյալ դրվագին<sup>42</sup>:

Ընդհանրապես, Եդիպյի վկայության վերաբերյալ նշենք, որ խնդրո առարկա ժամանակաշրջանի հայ մատենագիրների երկերում, ինչպես նաև մանր ժամանակագրություններում և ձեռագիր հիշատակարաններում բազում հաղորդումներ կան ջալալիների կողմից, հատկապես, մանկահասակ տղաների, պատանիների առևանգման և գերեվարման մասին: Մ.Օրմանյանի

<sup>42</sup> Յդ. արաբ պատմիչ Ահմադ իբն Ֆադլանն իր «Ռիսալե» ուղեգրական երկում խոսելով թուրքերի շրջանում արվամոլության դատապարտության մասին, մասնավորապես, բերում է հետևյալ օրինակը. «Իսկապես, ինչ-որ ժամանակ Կուդարկինի, իսկ դա թուրքերի լթուրքերի» փոխարքան է, տոհմի մարդկանց մոտ կանգ առավ Խորեզմի բնակիչներից մի մարդ և առժամանակ ապրեց իր տիրոջ մոտ ոչխարների գնման համար: Իսկ թուրքն ուներ անմորուս որդի, և խորեզմցին չէր դադարում հետևել նրան և հակել դեպի իրեն, մինչև որ ենթարկեց իր ցանկությանը: Եկավ թուրքը և գտավ նրանց երկուսին միասին: Այդժամ թուրքը բողոքեց այդ մասին Կուդարկինին: Նա ասաց. «Ժողովի՛ր թուրքերին»: Եվ նա ժողովեց նրանց: Երբ նրանք հավաքվեցին, նա ասաց թուրքին. «Ցանկանու՞մ ես դու, որպեսզի ես դատեմ իրավունքով կամ կեղծ»: Նա պատասխանեց. «Իրապես»: Նա ասաց. «Բե՛ր քո որդուն»: Նա բերեց նրան: Նա ասաց. «Պետք է, որ նրանք երկուսն էլ սպանվեն՝ նա և առևտրականը»: Թուրքը դրանից բարկացավ և ասաց. «Ես չեմ տա իմ որդուն»: Նա էլ ասաց. «Այդ դեպքում առևտրականը փրկագին կտա իր համար»: Նա արեց այդ և վճարեց թուրքին ոչխարներով նրա որդու նկատմամբ գործածի համար, և վճարեց Կուդարկինին չորս հարյուր ոչխար այն բանի համար, որ իր վրայից հանեց (պատիժը), և հեռացավ թուրքերի երկրից» (Путешествие Ибн-Фадлана на Волгу [Перевод и комментарии А.П.Ковалевского]. Под редакцией И.Ю.Крачковского, Изд. Академии наук СССР, М-Л, 1939, с. 62): Ակնհայտ է, որ «Կուդարկին» (այլ թարգմանություններում՝ «Կուդերկին») տիտղոսը կրող թուրք իշխանավորը դատն իրականացնում է առկա իրավունքի նորմերի համաձայն: Հարկ է նաև նշել, որ, մասնավանդ, Կենտրոնական Ասիայում, այսպես կոչված, «բաչեբազների» ավանդույթով անմորուս լինելը պարտադիր պայման է համարվել արվամոլության ակտին մասնակից պատանու համար:



ընդգծմամբ, ջալալի էլուզակները «յատուկ կերպով կը հետեւէին... գեղերես մանչերու առեւանգութեան»<sup>43</sup>:

Ջալալիներն ընդօրինակելով ընդօրինակում էին օսմանյան պետության քաղաքականությունը, մանավանդ, քրիստոնյա հպատակների նկատմամբ: Իրենց զավթած տարածքներում նրանք յուրօրինակ մանկահավաքներ («ղևջիրմե») էին անցկացնում, որոնց ընթացքում առևանգվում և գերեվարվում էին հազարավոր մանուկներ ու պատանիներ: Ընդհանրապես, ենիչերության շարքերը լրացնելու նպատակով «ղևջիրմե» («տղայաժողով», «մանկաժողով», «արյան հարկ») հայաբնակ տարածքներում անցկացվել է դեռևս 1464թ.-ից, ապա շարունակվել 1519թ., 1531թ., 1536թ., 1543թ., 1547թ., 1550թ., 1590թ. և 1622թ.<sup>44</sup>: Սակայն ջալալիների ապստամբությունների ընթացքում իրականացվել են հենց ապստամբների կողմից կազմակերպված յուրօրինակ «ղևջիրմեններ», որոնք, ըստ էության, դաժանությամբ առավել աչքի են ընկել, քան թե սուլթանական իշխանությունների կողմից պաշտոնապես կազմակերպվող նման միջոցառումները:

Առաջին օրինակը տալիս է հենց ապստամբության առաջնորդ Կարա Յազըրին (իրական անվամբ՝ Աբդուլհալիմ)՝ իր գրաված առաջին հենակետ և ծննդավայր Ուրֆայում (Ուռհա): Այդ մասին վկայված է 1601թ. գրչագիր մի Շարակնոցում Հակոբ Թոխատեցու թողած հիշատակարանում. «Նախ էառ {Ղարա Եազըրճի} գՈւրհա քաղաք եւ տիրեց իւր բոլոր գեղի եւ մանր քաղաքացն... զոմանս սպանեալ եւ զտասն տարուն ի վեր եղած զտղայքն գերի առեալ: Եւ տարի մի այլ եկեալ Մալաթիա

<sup>43</sup> Օրմանեան Մ., Ազգապատում, հտ. Բ, Կ. Պոլիս, 1914, էջ 2306:

<sup>44</sup> Զուլայան Մ., «Ղևջիրմե»-ն (մանկահավաքը) Օսմանյան կայսրության մեջ ըստ թուրքական և հայկական աղբյուրների, ՊԲՀ, հ. 2-3 (5-6), էջ 247-256, Երևան, 1959, էջ 250:

բնակեալ... Եւ անտի եկեալ բազում զօրաւք ի Մեքաստիա քաղաք... Եւ զնոցա զտղայքն այլ գերի առին եւ իւրեանց չար գործոցն կցորդ արարին... ոչ հայ ոչ տաճիկ ասին, զամենայն սրով մաշեցին»<sup>45</sup>:

1600թ. ապրիլին Տիվրիկի շրջակայքում «Ջեհեննեմ-դերե» («Դժոխքի ձոր») վայրում տեղի ունեցած ճակատամարտում կառավարական զորքերից պարտվելով՝ Կարա Յազըջին շարժվում է Մեքաստիա, ուր, ինչպես իր հիշատակարանում գրում է Մելիքսեթ եպիսկոպոս Մեքաստացին, «անխնայ կոտորեաց բազում քրիստոնեայս եւ զմանկունս նոցա գերի տարեալ հանդերձիւք զարդարէին եւ ի սբ. հաւատոցն մերկ արարին»<sup>46</sup>: Մեկ այլ հիշատակարանի տվյալներով, «ի յայսմ ամի {ՌԾ (1601)} բազում զօրօք եկն ի վերայ մեծ քաղաքիս Մելաստոյ... աւելի քան զԻՌ (20.000) այր ջարդեաց, եւ սրախողխող արար, եւ ԸՃ (800) անմեղ տղայս ի Հայոց եւ ի Հոռոմոց գերի վարեաց»<sup>47</sup>: Մեքաստիայում ջալալիների կողմից անցկացված այս մանկահավաքի մասին հիշատակում է նաև Գրիգոր վարդապետ Դարանաղցին<sup>48</sup>:

Ուշագրավ է Մելիքսեթ Մեքաստացու «զմանկունս... գերի տարեալ հանդերձիւք զարդարէին» արտահայտությունը, ինչը վստահաբար, այսպես կոչված, «կըզըլ-աբայի» մասին է, կարմիր հագուստ, որը հազցնում էին «ղեշիրմեի» ընթացքում հավաքված մանուկներին և պատանիներին<sup>49</sup>: Օսմանյան կայսրությունում անգամ պաշտոնապես առևանգվող մանուկների ծնողների

<sup>45</sup> Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (ՀՀՀ), կազմեցին Վ.Հակոբյան, Ա.Հովհաննիսյան, հտ. Ա, Երևան, 1974, էջ 125:

<sup>46</sup> Անդ, էջ 133:

<sup>47</sup> Անդ, էջ 112:

<sup>48</sup> Ժամանակագրություն Գրիգոր վարդապետի Կամախեցոյ կամ Դարանաղցոյ, Երուսաղէմ, 1915, էջ 26-27:

<sup>49</sup> «Կըզըլ աբայի» հատուկ հարկը սկզբնական շրջանում սահմանված էր 90-100 ակչե յուրաքանչյուր երեխայի համար, իսկ հետագայում՝ XVIդ. վերջին և XVIIդ. սկզբին հարկի չափը հասնում էր մինչև 600 ակչեի (Ձուլալյան, էջ 252):

նկատմամբ հատուկ հարկ էր նախատեսված տվյալ զգեստի համար<sup>50</sup>: Ակնհայտ է, որ ընդօրինակելով օսմանյան կառավարիչների քաղաքականությունը քրիստոնյա հպատակների նկատմամբ՝ ջալալիներն իրենց անցկացրած «ղնշիրմեների» ժամանակ ընդօրինակում էին դրան համապատասխան ողջ արարողակարգը և բնորոշ տարրերը:

Մեկ տարի անց Թոխատում առավել դաժանաբար է գործում Կարա Յազըջիի եղբայր Դելի Հասանը<sup>51</sup>, որը Հասան փաշայի գորքերը ջախջախելով՝ 1602թ. մայիսին գրավում է այն:

*Յայնժամ ըզծերսն կոտորեցին,*

<sup>50</sup> Անդ:

<sup>51</sup> Եղբոր՝ Կարա Յազըջիի մահից հետո (1602թ. սկիզբ) գլխավորելով ջալալիների ապստամբությունը՝ Դելի Հասանը մի քանի հաղթական կռիվներ է մղում կառավարական գորքերի դեմ: Մայիսին նրա գորքերը ներխուժում են Թոխատ, ինչի մասին ի տարբերություն թուրքական աղբյուրների՝ առավել ընդարձակ տեղեկություններ են հայտնում հայկական աղբյուրները, մասնավորապես, այդ առթիվ Ստեփանոս Թոխատեցու, Հակոբ Բաթուկենցի գրած չափածո ողբերը: 1603թ. կեսերին սուլթանի կողմից ներման արժանանալով՝ Դելի Հասանը ստանում է Բուդումի սանջաքը (Բոսնիա), ուր և բնակչությունը սկսում է ենթարկվել կողոպտոսի և բռնությունների: Հանդուզն ջալալին նույնիսկ բանակցությունների մեջ է մտնում Վենետիկի հանրապետության և Հռոմի պապի հետ՝ 100 հազար ոսկով ծախելով Դալմաթիայի Դեսնե բերդը: Սակայն դրանից հետո ձերբակալվում է պետական դավաճանության մեղադրանքով և 1605թ. գլխատվում Բելգրադում:

Էպոսի արևմտյան խմբի տարբերակներում Դելի (գիժ, խենթ) Հասանը կենտրոնական կերպարներից է: Նա առաջինն է իր ձիավոր խմբով զինակցում Քյոռոզլուն՝ ավանդական մենամարտից հետո եղբայրանալով: Որոշ պատումներում նրա կերպարը նույնացվում է Դեմիրչիօղլու հետ (Դեմիրչիօղլու Դելի Հասան), սակայն դրանցում էլ պարզ զգացվում է, որ խոսքը տարբեր անձանց մասին է: Ընդհանրապես, այս երևույթը, որ էպոսի զանազան տարբերակների բնորոշ առանձնահատկություններից է համարվում նաև այլ հերոսների վերաբերմամբ, դիտարկվում է Ուրմիայի Բարբառով գրառված հայկական տարբերակում ևս. «Իմ սոյըս ի Դեմիրչի-Օղլի, Ընձի կասեն՝ Դալի-Հասան» (Քյոռ-Օղլի, ժող. վիպ., էջ 84): Էպոսի այլ տարբերակներում (արևելյան խմբում, մասնավորապես, թուրքմենական և ուզբեկական) Դելի Հասանն, ըստ երևույթին, ներկայացվում է որպես Քյոռոզլու որդեգիրներից մեկը (Հասան, Էր-Հասան):

*Ձերիտասարդան գրլիատեցին  
Եւ գեղեցիկ մանկունսն քոյին  
Ի ծընօղացրն զատեցին,*

-գրում է տաղասաց Հակոբ Թոխատեցին (Բաթուկենց) իր ողբում («Տաղ եւ ողբանք ի վերայ Եւրոկիա քաղաքին, որ այժմ ասի Թոխաթ, զոր ոմն անօրեն Տէլու Հասան ասեն որ եկաւ այրեաց եւ աւերեաց զաշխարհն»)՝<sup>52</sup> Նույն դեպքերին նվիրված իր ողբում («Ողբ ի վերայ Եւրոկիա մեծի քաղաքին...») Ստեփանոս Թոխատեցին ևս հիշատակում է, որ «Ձմանուկ տըղայքն արին գերի»<sup>53</sup>: Այս հեղինակն առավել արժեքավոր տեղեկություններ է հայտնում իր հիշատակարանում, որպես անմիջական ականատես. «... եւ մնաց քաղաքն Գ (3) ամիս ի ձեռքն նոցա, շատ մարդիկ եւ զբազումս չարչարէին, թէ մեզ ըռզակ<sup>54</sup> եւ մանչ ցըցուցէք. Զ (6) Է (7) տարու ի վեր տղակներն զամէնն առին եւ հագուցին, զի մինչեւ ԻՌ (20.000) տղայ առեր էին ի հայէ եւ ի տաճկէ, եւ բազում սարկաւագունք եւ տոլվաթորաց տղայք տարան եւ զծնօղսն աղէխարշ արարին»<sup>55</sup>: Ստեփանոսն ինքը հրաշքով է կենդանի մնում, երբ իրեն բռնած ջալալիները պահանջում են. «Մեզ մանչ եւ ըռզակ ցըցուր»: Սակայն դաժանորեն սպանվում է նույն պահանջը չկատարած Աստվածատուր եպիսկոպոսը<sup>56</sup>:

Փաստորեն, Թոխատում անցկացված այս ջալալիական մանկահավաքն առավել աննախադեպ չափերի էր հասնում (20.000 տղա): Խտրականություն չի դրվում նույնիսկ քրիստոնյաների (հայերի և հույների) ու մահմեդականների միջև:

<sup>52</sup> Խաչատրյան Պ., Հայ միջնադարյան պատմական ողբեր, Երևան, 1969, էջ 269:

<sup>53</sup> Անդ, էջ 253:

<sup>54</sup> «Ըռզակ»՝ փոխառություն է արաբերենից, arzāq «ապրանք», «ինչք»: Ավելի ուշ, մանավանդ, Կ.Պոլսի խոսվածքում վերաբերվել է ակնեղենին և գոհարեղենին:

<sup>55</sup> ՀՀՀ, հտ. Ա, էջ 126:

<sup>56</sup> Անդ:

Մանուկների և պատանիների առևանգումը շարունակվում է նաև հետագայում, այլ ջալալի առաջնորդների կողմից: Մասնավորապես, նման մի դեպք ջալալի Թավուլի (թուրքական աղբյուրներում՝ Թավիլ Ահմեդ կամ Թավիլ Հալիլ) կողմից 1608թ. վկայում է Սրապիոն Բաբերդացին իր հիշատակարանում. «...և եկեալ ԺՌ (10.000) հեծելօք {պիղծ Թաւուլն} ի յերկիրն Կիլիկեցոց եւ առեալ զԱտանայ, զԹարսիս, զՄիս, զՂարս եւ բազում աներ էած եւ ԵՃ (500) արու մատաղ տղայք գերի տարավ ի Ատանոյ»<sup>57</sup>:

Նույն կերպ էին գործում նաև Այրարատյան երկրում ապաստանած ջալալիները. «Դարձեալ յորժամ Այրարատեան երկիրն անտիրացաւ,- վկայում է ականատես գրիչը,- գունդ մի ելուզակ, գոր ջալալի ասեն, ի Տաճկաց կողմանէն եկեալ բնակեցան անդ... գիշերագնաց եղեալ զըննէին եւ որոնէին, եթէ ուր ուրեք գտանի մարդ, ի վերայ հասեալ կոտորէին եւ զտղայս գերէին»<sup>58</sup>:

Ինչպես կարելի է համոզվել վերը բերված փաստերից, ընդհանրապես, արական սեռի կրտսեր տարիքի ներկայացուցիչների առևանգումն ու գերումը հիմնական տարրերից մեկն է հանդիսանում ջալալիների ավագակային գործունեության: Տվյալ դեպքում հարց է առաջանում. եթե Օսմանյան կայսրությունում սուլթանական հրովարտակների՝ «հյուքմերի» համաձայն քրիստոնյա հպատակներից «ղնշիրմեի» միջոցով պարբերաբար (յուրաքանչյուր 2-3 կամ 5 տարին մեկ) հավաքված ֆիզիկապես ուժեղ և գեղեցիկ 8-20 տարեկան մանուկներն ու պատանիները, որոնք ուղղակի պետականորեն էին առևանգվում, նախատեսվում էին հիմնականում ենիչերիների շարքերը լրացնելու կամ կայսրության բարձրագույն

<sup>57</sup> Անդ, էջ 294:

<sup>58</sup> Անդ, էջ 288:

պաշտոնատարներ (իչ-օղլաններ) և պալատական սպասավորներ (աջեմի-օղլաններ) դարձնելու համար, ապա ի՞նչ նպատակներով էին համանման գործողությունների դիմում ջալալի ապստամբները: Նվազ հավանական է թվում, որ այդ կերպ լրացվեին հենց իրենց՝ ջալալիների շարքերը, թեև մյուս կողմից չի բացատրվում, որ գերյալները կարող էին որպես ծառաներ և սպասավորներ օգտագործվել, ինչի մասին վկայում է Հակոբ Թոխատեցու «իւրեանց չար գործոցն կցորդ արարին» արտահայտությունը<sup>59</sup>:

Առաքել Դավրիժեցու վկայությամբ, Այրարատյան երկրում հաստատված ջալալիները նաև մարդավաճառությամբ էին զբաղվում: Մասնավորապես, Գեղարքունիքում նրանց կողմից գերեվարված կանայք և պատանիները բաց էին թողնվում միայն հարազատներից փրկագին ստանալու դեպքում. «Այլ և զկանայս, և զտղայս գերեցուցին բերին ընդ ինքեանս. որպէս զի տեարք գերեացն արծաթ և ոսկի վասն նոցին գնոցն բերեալ դարձուցեն զգերիսն. և իբրև ըստ բաղձանաց սրտից իւրեանց գոր ինչ և կամեցան, արարին. և ապա չուեցուցեալ զգերեալ կանայսն և զտղայսն...»<sup>60</sup>:

Գրիգոր Դարանաղցու հաղորդմամբ, ջալալիները «յատուկ յատուկ շրջէին եւ աւար հարկանէին... զմանկունս եւ զկանայս խայտառակէին: Ոչ թէ քրիստոնէից միայն առնէին, մանաւանդ տաճկաց առաւել անողորմաբար գործէին զամենայն չարիս...»<sup>61</sup>: Պատմագիրն ուշագրավ մանրամասներ է հայտնում Սեբաստիայում ջալալիների անցկացրած յուրօրինակ «դնշիրմէի» վերաբերյալ. «Զմինն {երկուց բերդիցն} առին եւ լցան ինչիւք եւ շատ

<sup>59</sup> Անդ , էջ 125:

<sup>60</sup> Դավրիժեցի, էջ 106:

<sup>61</sup> Դարանաղցի, էջ 144:

արու մանկամբք, քանզի ասախ<sup>62</sup> էր հրամեր՝ թէ վայ այնոցիկ, որ ի կոյս աղջիկ եւ կամ ի կին մերձենայցէ ոք, բայց միայն՝ արու մանկանց (ընդգծումը մերն է -Ս.Ռ.), որ շատ մանկունք յաղջկան կերպիւք ազատեցան, որ մին ամիս յաւելի նստան ի յեզեր քաղաքին ի վերայ Ալիս գետոյն»<sup>63</sup>: Այս սողունգոմորից փրկվածների մեջ է լինում նաև Դարանաղցու տասնչորսամյա կրտսեր եղբայրը. «Որ ի ժամանակին յայնմիկ մեր ըստ մարմնոյ եղբայր մահտեսի Մարկոսն, որ անդ լինելով ի տիս մանկութեանն չորեքտասանամեայ գոլով, աղջիկակերպ բազում աւուրքք կու շրջէաք ի մեջ նոցա, եւ այնպիսի հնարիւք հազիւ ազատեցաք, ասէր»<sup>64</sup>:

Իր երկուն պատմագիրը բազմիցս հիշատակում է ջալալիների կողմից «պղծութեան աղագաւ» մանկանց և պատանիների առնանգման շատ դեպքեր: Այսպես, խոսելով Ջղալօղլի Սինան փաշայի կողմից Մելիտինեի (Մալաթիա) կառավարիչ նշանակված ջալալի առաջնորդ Ահմեդ Կարակաշի (Ղարաղաշ) գործած վայրագությունների մասին, որը «Քյոռօղլի» էպոսի որոշ տարբերակներում (այդ թվում՝ հայկական) հանդես է գալիս որպես Քյոռօղլու «դալիներից» մեկը, Դարանաղցին գրում է. «Եւ յետ այսորիկ այլ մեծագոյն չարիս արար, որ տեղացի լաւ պարոն կացեր... նա մօտ աւուրքն մեռեալ էր, զնորա պատանի որդեակն յափշտակեաց եւ առ վասն պղծութեան աղագաւ, որպէս սովորութիւն է տաճկացն, որ զգործս կանանցն յարանցն խնդրել... Եւ տղան այլ խապար դրկելով յառաջագոյն առ արանցն պատուականաց թէ՛ ձեզ անուն է որ ես մեծ իշխանի որդի լինիմ եւ

<sup>62</sup> Թրք. «ասախ», նաև՝ «եասախ», նորագույն թուրքերենում՝ yasak, «արգելք», «պատուհաս», «պատիժ»:

<sup>63</sup> Դարանաղցի, էջ 26-27:

<sup>64</sup> Անդ, էջ 27:

սա մէկ ջալալի, զիս ի տեղի կնոջ ըմբոնէ... Եւ մեծունայքն խրատեցին զպարոնորդին թէ՛ սպան զնա ի գիշերի յանկողնի եւ ազատեսցիս դու եւ ամենայն աշխարհին: Եւ ըստ խրատու նոցա սպան զնա յանկողնի»<sup>65</sup>:

Դարանաղոս հաղորդումից հետևում է, որ նշված արգելքը («ասախ») Մեբաստիան գրաված ջալալիների գորքերի հրամանատարությունից էր գալիս, որի ներքում, ըստ երևույթին, կար արվամոլ և մանկապիղծ բարքերի հետևորդ ղեկավարների խումբ: Հաջորդ հաղորդմամբ ավելի հստակ մատնանշվում է թուրքերի շրջանում դեռևս հնուց առկա մանկապղծության և, ընդհանրապես, արվամոլության սովորությունը («զգործս կանանցն յարանցն խնդրել», անդ)<sup>66</sup>: Հատկանշական է նաև, որ արդեն իսկ պաշտոնական օսմանյան դեշիրմենների ժամանակ որպես իչ-օղլաններ ընտրվում էին ամենագեղերես տղաները, սուլթանների և բարձրաստիճան պալատականների արվամոլական նպատակների համար, և, ընդհանրապես, հենց դրա հետ է կապվում նշված հաստատության ստեղծումը<sup>67</sup>:

Փաստորեն, ջալալի առաջնորդները մանկաժողովների նմանվող իրենց գործողությունները և անառակաբարո կենցաղը չեն դադարեցրել ինչպես բուն ապստամբությունների ընթացքում,

---

<sup>65</sup> Անդ, էջ 48:

<sup>66</sup> Մանավանդ, թուրքերի շրջանում մանուկների և պատանիների հետ մերձենալու սովորությունը այնքան արմատացած է եղել, որ մահմեդականության ընդունմամբ իսկ սահմանվել են որոշ արգելքներ: Օրինակ, մանկապիղծին մերձեցածի քույրը և մայրը համարվում էին «հարաամ» նրա համար, այսինքն՝ արգելվում էր ամուսնությունը նրանց հետ: Նմանապես «հարաամ» էր, եթե արարքը կատարվել էր ամուսնությունից հետո: Պատիժը մեղմ էր սահմանվում, եթե մանուկը կամ պատանին անմորուս էին («բաչա բերիշ»), հակառակ դեպքում՝ պատիժը խստացվում էր: Այսպես կոչված, «բաչեբազների» ավանդույթն այժմ էլ նկատվում է Աֆղանստանում և Պակիստանում:

<sup>67</sup> Շաքարյան Ա., «Արյան հարկը» Օսմանյան կայսրությունում. դեշիրմե, Երևան, 2006, էջ 93-94:



այնպես էլ որոշ դեպքերում պետական պաշտոններ ստանալուց հետո: Եվ եթե օսմանյան իշխանություններն օրինականացված կարգով մանկաժողովներ էին իրականացնում և «արյան հարկ» գանձում մի քանի տարին մեկ անգամ, ապա, փաստորեն, ջալալիների ապստամբությունների ողջ ժամանակահատվածում նրանց վերահսկողությանն անցած անխտիր բոլոր տարածքներում դրանք շարունակական բնույթ էին կրում<sup>68</sup>: Վերոհիշյալը միանգամայն համահունչ է նաև XVIդ. վերջին օսմանյան պետական գրագրության մեջ հիշատակվող պատմական Քյոոզլի ջալալի ավագակապետի իրականացրած պատանիների առևանգման և պատանդառման գործողություններին, որոնց մասին առկա է նաև ավելի ուշ շրջանի հայ մատենագիր Եղիա Մուշեղյանի համանման հաղորդումը: Վստահաբար հենց տվյալ պատմական իրողություններն են իրենց գեղարվեստական արձագանքը գտել էպոսում՝ պատանու կամ պատանիների առևանգման և հետագա որդեգրման (կամ կարծեցյալ որդեգրման) մոտիվով:

Վերոշարադրյալի հաշվառմամբ կարելի է անել ներքոհիշյալ եզրակացությունները.

• *Որդեգրի կերպարը և դրա հետ կապված առևանգման դրվագը կայուն տեղ են գրավում «Քյոոզլի» էպոսի արևմտյան խմբի տարբերակներում, ընդամին, որդեգրին երբեմն վերագրվում է հայկական ծագում,*

---

<sup>68</sup> Առանձնահատուկ դաժանությամբ անցկացված ջալալիական մանկահավաքները ևս Օսմանյան կայսրության համակարգի ծնունդ էին և դրա բնորոշ ընդօրինակում, ինչը, սակայն, դեշիրմենների հարցին նվիրված ուսումնասիրություններում բացարձակ չի լուսաբանվել:

• Միևնույն կերպարն ու բնորոշ դրվագն ակնհայտորեն իրենց անդադարձն են գտել էպոսի արևելյան խմբի տարբերակներում,

• Որդեգրի կերպարի և նրա առնանգման հետ կապված դրվագի ճանապարհով էպոսում արտացոլվել են XVIդ. վերջին և XVIIդ. սկզբին ջալալիական ապստամբությունների ժամանակահատվածում արձանագրված պատմական իրողությունները, մասնավորապես, տարածաշրջանի բնակչության (այդ թվում՝ հայ) շրջանում ջալալիների իրականացրած մանկահավաքները և այլ բռնի գործողությունները:

### Ծանոթագրություններ

1. Նկատի է առնվում 1830-ական թթ. Իրանի Ատրպատական (Ադրբեջան) երկրամասում ռուսաստանցի (լեհ) արևելագետ Ալեքսանդր Խոձկոյի (1804-1891) գրառած և 1842թ. անգլերեն Լոնդոնում տպագրված ամբողջական տարբերակը (A.Chodzko, Specimens of the Popular Poetry of Persia, as Found in the Adventures and Improvisations of Kurroglou, the Bandit-Minstrel of Northern Persia, and in the Songs of the People Inhabiting the Shores of the Caspian Sea), որը 14 տարի անց թարգմանվելով ռուսերենի՝ հրատարակվել է Թիֆլիսում (Кёр-оглу, восточный поэт-наездник, Тифлис, 1856): Բնականաբար, տվյալ ժամանակահատվածում էպոսն ադրբեջանական (հյրն.՝ ատրպատականյան) էր համարվում գրառման տեղավայրի հաշվառմամբ, սակայն 1918թ. հետո Հարավային Կովկասում Մոսկվայի անվամբ կազմավորման ի հայտ գալով՝ դրան ուղղակիորեն վերագրվել է էթնիկ պատկանելություն: ԽՍՀՄ օրոք հարցն առավելապես կրել է համաթուրանական գունավորում՝ ելնելով Հարավային Ադրբեջանի՝ կեղծ դրույթից, ընդամին, հենց այդ ժամանակահատվածից էլ շրջանառության մեջ է դրվել

‘հարավադրբեջանական’ բացարձակ հակազիտական որակումը: Էպոսի խոշորագույն հետազոտողներից Խ.Կորոզլին ինքը ծագումով Իրանից լինելով՝ վերջին շրջանի իր ուսումնասիրություններում Խոճկոյի գրառած տարբերակի վերաբերմամբ նախապատվություն է տվել ‘վաղադրբեջանական’ որակմանը: Սույն ուսումնասիրության մեջ Ադրբեջանական ԽՍՀ-ում գրառված պատումներից տարբերելու և քաղաքական նկատառումներով առաջացած տեղանվանական շփոթից խուսափելու նպատակով օգտագործել ենք ‘ատրպատականյան’ եզրը:

Միջանկյալ և ծագումնաբանորեն մոտ մի օղակ է XXդ. 60-ական թթ. թուրքագետ Լ.Չլաիձեի հայտնաբերած թուրքերենի ատրպատականյան բարբառով (իրանական ադրբեջաներեն) 28 մեջլիսներից կազմված էպոսի տարբերակը, որը պայմանականորեն կոչվում է ‘Թրիլիայան ձեռագիր’: Խ.Կորոզլու կարծիքով, այն գրառվել է XIXդ. երկրորդ կեսին և ավելի մի հին ձեռագրի պատճեն է (Короглы, 1983, с. 183): Պարսկերենի խիստ ազդեցությունն այս ձեռագրում թույլ է տալիս եզրակացնել, որ այն ևս Ատրպատականում է գրառվել:

2. Այվազի առևանգման և որդեգրման, ինչպես նաև ‘Քյոռօլլի’ էպոսի զանազան տարբերակներում առկա այլ կայուն մոտիվներ բացակայում են հիմնականում միայն XXդ. սկզբի թուրք գրող Նիզամեդդին Նազրֆի մշակած տարբերակում, որը 1928թ. հրատարակվել է Ստամբուլում: Այն, ընդհանրապես, բավականին հեռացել է էպոսի մեզ հայտնի բոլոր տարբերակների ավանդականությունից, որոնց հետ սյուժեն կապվում է ընդամենը երկու հիմնական հերոսների՝ պատանի Քյոռօլլու և Բոլի քաղաքի կառավարչի (Բոլիբեյ) կերպարների առկայությամբ: Նազրֆի

գեղարվեստականացրած (վերամշակած) տարբերակի սկզբնական աղբյուրների կամ առկա ավանդականության փոփոխման հիմքերի մասին ներկայումս ոչինչ հայտնի չէ: Կարելի է միայն ենթադրել,- գրում է Խ.Կորոզիլին,- որ վեպի գրառման հիմնական աղբյուրը եղել է առասպելական Քյոռոզլուի սխրանքների մասին մեզ անհայտ ևս մեկ բանահյուսական տարբերակ: Դա հաստատվում է տարբերակի տիպաբանական վերլուծությամբ՝ (Корозлы, 1969, с. 93):

3. 'Թեքեյուն' 'թեքեի' թուրքականացված ձևն է: Ցայժմ էլ Մուղանում (Իրան) թեքեյու անվամբ հայտնի է շահսևանների ցեղախմբերից մեկը (Балаян, с. 339): Ադրբեջանցի հեղինակների մոտ ակնհայտորեն թուրքմենական թեքեյու ցեղամիավորումը հաճախ ներկայացվում է որպես ադրբեջանական՝ կապված պատմական Քյոռոզլուն ադրբեջանցի և ջալալիական շարժումները ներկայիս Ադրբեջանի տարածքում տեղի ունեցած լինելու տեսանկյունից ներկայացնելու ձգտման հետ: Ընդ որում, միանգամայն անհիմն և հանիրավի կերպով վկայակոչվում են ինչպես Քյոռոզլու մասին վկայող պատմական աղբյուրները և էպոսի զանազան տարբերակները, այնպես էլ մի շարք ժամանակակից ուսումնասիրողներ (օրինակ, Тахмасиб, с. 11, Рахмани, с. 156):

4. Ղազնևիների թյուրք-մահմեդական արքայատան ակնառու ներկայացուցիչ, 998թ.-ից էմիր և փառիշահ Մահմուդի մատովակ Այազը (Մալիք Այազ) ծագումով վրացի ստրուկ էր, Այմաք Աբուն-Նաջմի որդին: Ըստ պատմական աղբյուրների, վերջինս փաստացի Մահմուդ Ղազնևիի կողակիցն էր, առկա են նաև բազմաթիվ պոեմներ, որոնցում գովերգվում է Այազի նկատմամբ՝ սերը՝ (մի հանգամանք, որ լիովին բնորոշ է Քյոռոզլուն վերագրվող Այվազի մասին մեզ հասած խաղերի բովանդակությանը): Այս գույզի մասին գրույցներն իրենց ամփոփումն են ունեցել նաև սուֆիական և

մահմեդական Հնդկաստանի գրականության մեջ, Ղազնևին ինքը բնութագրվել է որպես իր ստրկի ստրուկ՝ (Neill, p. 308): Այազը կարևոր դերակատարություն ուներ արքունիքում, ստանձնել է նաև զինվորական պաշտոններ Ղազնևիի բանակում: 1021թ. Ղազնևին Այազին է հանձնում Լահորի գահը՝ նրան դարձնելով տեղի առաջին մահմեդական կառավարիչը: Այազը վերաշինում է ավերված քաղաքը՝ այն դարձնելով առևտրի և մշակույթի կենտրոն: Ժամանակին նրա անվամբ Այազաբադ է կոչվել Լահորին մերձակա ներկայիս Գուշար-Խանը: Մահացել և թաղվել է Լահորում, գերեզմանն ավերվել է սիկհերի կողմից 1811թ.:

Ընդհանրապես, վրացի գեղերես պատանիների հոչակն ավելի ուշ տարածված էր մահմեդական Արևելքում, մանավանդ, Սեֆևյանների արքունիքում հիշատակվում են վրացի սպասավորները (ղուլամ) և մատովակները (Allsen, p. 264):

Կարելի է ենթադրել նաև որոշակի կապ Ղազնևի-Այազ և Քյոռոլի-Այվազ զույգերով հանդես եկող կերպարների միջև, մանավանդ, որ Մահմուդ Ղազնևու մասին զրույցները՝ Քյոռոլի՝ էպոսի ձևավորման ժամանակահատվածում էլ տարածված էին, մանավանդ, Կենտրոնական Ասիայում: Քյոռոլին ինքն էպոսում հանդես է գալիս որպես հանպատրաստից բանաստեղծ-երգիչ, աշուղ, իսկ պատմական Քյոռոլու մասին առկա է ուշ միջնադարի հայ պատմագրության նշանավոր ներկայացուցիչ Առաքել վարդապետ Դավրիժեցու եզակի վկայությունը. Քոռոլի, այս այն Քոռոլին է, որ բազում խաղ է ասացեալ՝ զոր այժմ աշղներն եղանակեն՝ (Դավրիժեցի, էջ 108): Երկու դեպքում էլ առկա են գեղերես պատանուն նվիրված սիրային խաղեր, և երկու դեպքում էլ պատանիները մատովակներ են, ապա՝ տիրոջ հավատարիմ ծառաներ ու մարտիկներ: Առավել հետաքրքիր է, որ ինչպես

Ղազնևու Այազը, այնպես էլ ուզբեկական, դազախական և թուրքմենական որոշ պատումներում որդեգիր Այվազ-Ավազը ևս վրացի է կամ կապված է Վրաստանի (Գուրջաստան) հետ: Այսինքն, Քյոռոլու առևանգած գեղերես պատանին պետք է որ անպայման նման անուն կրեր:

5. Նազար Չալալիի կերպարն առկա է միայն Խոճկոյի տարբերակում և 'Թբիլիսյան ձեռագրում' հանդիսանալով էպոսում ջալալիների ապստամբության վերհուշի եզակի արտահայտություն: Միայն վերջին դեպքում առկա է նաև գլխավոր հերոսի 'Չալալի Քյոռոլի' անվանումը, ինչը, սակայն, կապվում է, իբր, համանուն թուրքմենական ցեղախմբի հետ (Короглы, 1983, с. 184-191): Խոճկոյի մոտ Նազար Չալալին թուրքմենական թերեջիմե ցեղախմբից է, աչքի է ընկնում քաջությամբ և լավ պատերազմող է, իր 12 հազար հեծյալներով մեկնում և մարտարվեստ է ուսանում Քյոռոլու մոտ: Նրա պատվին կազմակերպված խնջույքում Քյոռոլին պատվիրում է Այվազին գինի մատուցել, ինչից վերջինս վիրավորվում է և հեռանալով՝ ապաստանում գլխավոր հերոսի վաղեմի հակառակորդ Բոլիբեկի մոտ, մի դրվագ, որ հաստատուն տեղ ունի 'Թբիլիսյան ձեռագրում': Նազարը Քյոռոլուն օգնության է հասնում Բոլիբեկի հարձակման ժամանակ և հաղթությունից հետո խորհուրդ տալիս ազատել գերյալներին (Chodzko, p. 259-281): 'Թբիլիսյան ձեռագրում' Քյոռոլին Այվազի պատճառով գժտվում է Նազար Չալալիի հետ և սպանում վերջինիս (Короглы, 1983, с. 241-242), ինչն, ըստ ամենայնի, ջալալիների միջև ժամանակին տեղի ունեցած երկպառակտչական կռիվների արձագանքն է: XVII մեջլիսում առկա է Հասան Չալալու կերպարը, ինչը որևէ ազգակցություն չունի, իբր, համանուն թուրքմենական ցեղախմբից սերող Չալալի Քյոռոլու հետ, այսինքն՝ ակնհայտորեն մատնանշվում է տվյալ կերպարի կապը ջալալիական ապստամբությունների հետ (անդ, էջ 236-238):

6. Ամեն պարագային ակնհայտ է հայ աշուղների դերը՝ Քյոտոլի՝ էպոսի կազմության գործում: Մ.Աբեղյանի ընդգծմամբ, մինչև 16-րդ եւ 17-րդ դարի մէջ... իրօք մի դիւցազնական վիպական շրջան է եղել մեզ համար, մեզ հետ եւ մեր դրացի թուրքերի համար, կազմուել են նոր վէպեր, մասամբ հայերի ձեռով, Քեոտոլուի, Շահիամայիլի եւ այլն մասին՝ (Աբեղեան, էջ 19):

7. Միևնույնը վերաբերվում է նաև Համգայի կերպարին, որն էպոսի բոլոր տարբերակներում բացասաբար է ներկայանում:

8. Այվազին նվիրված և ավելի վաղ գրառված թուրքական որոշ խաղերում առկա են նաև թվական հիշատակություններ, որոնցից մեկը մատնանշում է նաև աշուղ Ջամալին (Մկրտիչ Տալյան). Իսկ մի երգ էլ ունի Քոտոլին ասած, որտեղ ասում է այսպէս. Քոտոլին եմ 1018 թուին ցոյց տուի Այվազ-խանին սարերը: Այս երգի մէջ յիշուած թիւը, տաճկական թուականն է: Ուրեմն... Քոտոլու լոյս ընկնելը գալիս է 1600 թուականներին՝ (Քոտոլու հէքիաթը, մասն 1-ին, էջ II):

9. Ադրբեջանական (Ադրբեջանական ԽՍՀ-ում հրատարակված) տարբերակում անգավակ մնացած Նիգյարն ինքն է Քյոտոլուն դրդում Այվազի առևանգմանը՝ աշուղ Ջունունից տեղեկանալով նրա մասին: Քյոտոլին կատարում է կնոջ փափագը և Չենլիբել հասցնում պատանուն (Кёроглу, с. 114-141): Միևնույն կերպ՝ Նիգյարի փափագով է բացատրվում պատանու առևանգումն Ուրմիայի բարբառով գրառված հայկական տարբերակում (Քյոտ-Օղլի, ժող. վիպ., էջ 136): Այստեղ, կարծես, տրամաբանական բացատրություն է տրվում Քյոտոլու անբնական գործողությանը: Միևնույն կերպ Գյոտ-օղլուն որդեգրության է դրդում կին-փերի Աղա-Յունուսը, ինչն առկա է Չարջոու շրջանում

գրառված թուրքմենական պատումներից մեկում (Каррыев, с. 155-156):

10. Ճդ. արաբ պատմիչ Ահմադ իբն Ֆադլանն իր 'Ռիսալե'<sup>1</sup> ուղեգրական երկում խոսելով թուրքերի շրջանում արվամոլության դատապարտության մասին, մասնավորապես, բերում է հետևյալ օրինակը. 'Իսկապես, ինչ-որ ժամանակ Կուդարկինի, իսկ դա թուրքերի {թուրքերի} փոխարքան է, տոհմի մարդկանց մոտ կանգ առավ Խորեզմի բնակիչներից մի մարդ և առժամանակ ապրեց իր տիրոջ մոտ ոչխարների գնման համար: Իսկ թուրքն ուներ անմորուս որդի, և խորեզմցին չէր դադարում հետևել նրան և հակել դեպի իրեն, մինչև որ ենթարկեց իր ցանկությանը: Եկավ թուրքը և գտավ նրանց երկուսին միասին: Այդժամ թուրքը բողոքեց այդ մասին Կուդարկինին: Նա ասաց. 'Ժողովի՛ր թուրքերին': Եվ նա ժողովեց նրանց: Երբ նրանք հավաքվեցին, նա ասաց թուրքին. 'Ցանկանու՛մ ես դու, որպեսզի ես դատեմ իրավունքով կամ կեղծ': Նա պատասխանեց. 'Իրապես': Նա ասաց. 'Բե՛ր քո որդուն': Նա բերեց նրան: Նա ասաց. 'Պետք է, որ նրանք երկուսն էլ սպանվեն՝ նա և առևտրականը': Թուրքը դրանից բարկացավ և ասաց. 'Ես չեմ տա իմ որդուն': Նա էլ ասաց. 'Այդ դեպքում առևտրականը փրկագին կտա իր համար': Նա արեց այդ և վճարեց թուրքին ոչխարներով նրա որդու նկատմամբ գործածի համար, և վճարեց Կուդարկինին չորս հարյուր ոչխար այն բանի համար, որ իր վրայից հանեց (պատիժը), և հեռացավ թուրքերի երկրից' (Путешествие Ибн-Фадлана, с. 62): Ակնհայտ է, որ 'Կուդարկին' (այլ թարգմանություններում՝ 'Կյուզերկին') տիտղոսը կրող թուրք իշխանավորը դատն իրականացնում է առկա իրավունքի նորմերի համաձայն: Հարկ է նաև նշել, որ, մասնավորապես, Կենտրոնական Ասիայում, այսպես կոչված, 'բաչեբագների' ավանդույթով անմորուս լինելը պարտադիր պայման է համարվել արվամոլության ակտին մասնակից պատանու համար:



11. ‘Կրզըլ աբայի’ հատուկ հարկը սկզբնական շրջանում սահմանված էր 90-100 ակչե յուրաքանչյուր երեխայի համար, իսկ հետագայում՝ XVIդ. վերջին և XVIIդ. սկզբին հարկի չափը հասնում էր մինչև 600 ակչեի (Զուլայյան, էջ 252):

12. Եղբոր՝ Կարա Յազըջիի մահից հետո (1602թ. սկիզբ) գլխավորելով ջալալիների ապստամբությունը՝ Դելի Հասանը մի քանի հաղթական կռիվներ է մղում կառավարական գորքերի դեմ: Մայիսին նրա գորքերը ներխուժում են Թոխատ, ինչի մասին ի տարբերություն թուրքական աղբյուրների՝ առավել ընդարձակ տեղեկություններ են հայտնում հայկական աղբյուրները, մասնավորապես, այդ առթիվ Ստեփանոս Թոխատեցու, Հակոբ Բաթուկենցի գրած չափածո ողբերը: 1603թ. կեսերին սուլթանի կողմից ներման արժանանալով՝ Դելի Հասանը ստանում է Բուդումի սանջաքը (Բոսնիա), ուր ևս բնակչությունը սկսում է ենթարկվել կողոպուտի և բռնությունների: Հանդուգն ջալալին նույնիսկ բանակցությունների մեջ է մտնում Վենետիկի հանրապետության և Հռոմի պապի հետ՝ 100 հազար ոսկով ծախելով Դալմաթիայի Դեսնե բերդը: Սակայն դրանից հետո ձերբակալվում է պետական դավաճանության մեղադրանքով և 1605թ. գլխատվում Բելգրադում:

Էպոսի արևմտյան խմբի տարբերակներում Դելի (գիժ, խենթ) Հասանը կենտրոնական կերպարներից է: Նա առաջինն է իր ձիավոր խմբով զինակցում Քոռոզլուն՝ ավանդական մենամարտից հետո եղբայրանալով: Որոշ պատումներում նրա կերպարը նույնացվում է Դեմիրչիօղլու հետ (Դեմիրչիօղլու Դելի Հասան), սակայն դրանցում էլ պարզ զգացվում է, որ խոսքը տարբեր անձանց մասին է: Ընդհանրապես, այս երևույթը, որ էպոսի զանազան տարբերակների բնորոշ առանձնահատկություններից է համարվում նաև այլ հերոսների վերաբերմամբ, դիտարկվում է

Ուրմիայի բարբառով գրառված հայկական տարբերակում ևս. Իմ սոյըս ի ԴեմիրչիՕղլի, Ընձի կասեն՝ Դալիչասան՝ (ՔյոռՕղլի, ժող. վիպ., էջ 84): Էպոսի այլ տարբերակներում (արևելյան խմբում, մասնավորապես, թուրքմենական և ուզբեկական) Դելի Հասանն, ըստ երևույթին, ներկայացվում է որպես ՔյոռՕղլու որդեգիրներից մեկը (Հասան, Էրչասան):

13. Ըռզակ՝ փոխառություն է արաբերենից, arzâq՝ ‘ապրանք’, ինչք: Ավելի ուշ, մանավանդ, Կ.Պոլսի խոսվածքում վերաբերվել է ակնեղենին և գոհարեղենին:

14. Թրք. ‘ասախ’, նաս՝ ‘եսասախ’, նորագույն թուրքերենում՝ yasak, ‘արգելք’, պատուհաս, ‘պատիժ’:

15. Մանավանդ, թյուրքերի շրջանում մանուկների և պատանիների հետ մերձենալու սովորությունը այնքան արմատացած է եղել, որ մահմեդականության ընդունմամբ իսկ սահմանվել են որոշ արգելքներ: Օրինակ, մանկապիղծին մերձեցածի քույրը և մայրը համարվում էին ‘հարաամ’ նրա համար, այսինքն՝ արգելվում էր ամուսնությունը նրանց հետ: Նմանապես ‘հարաամ’ էր, եթե արարքը կատարվել էր ամուսնությունից հետո: Պատիժը մեղմ էր սահմանվում, եթե մանուկը կամ պատանին անմորուս էին (բաշա բերիշ), հակառակ դեպքում՝ պատիժը խստացվում էր: Այսպես կոչված, ‘բաշեբազների’ ավանդույթն այժմ էլ նկատվում է Աֆղանստանում և Պակիստանում:

16. Առանձնահատուկ դաժանությամբ անցկացված ջալալիական մանկահավաքները ևս Օսմանյան կայսրության համակարգի ծնունդ էին և դրա բնորոշ ընդօրինակում, ինչը, սակայն, դևշիրմենների հարցին նվիրված ուսումնասիրություններում բացարձակ չի լուսանաբանվել:

## ПЕРСОНАЖ УСЫНОВЛЕННОГО В ЭПОСЕ “КЕРОГЛЫ” И ОСНОВЫ ЕГО ИСТОРИЗМА

(Резюме)

*Րամազյան Սամվել*

Наличие эпизода похищения и усыновления красавца-подростка Айваза (Эйваз, Аваз, Овез, Иваз) во всех национальных версиях является характерным для эпоса “Кероглы”. Детали, реалии и география меняются в зависимости мест и среды распространения эпоса.

Так как основы историзма эпоса в целом касаются джелалийским восстаниям в Османской империи конца XVIв. и начала XVIIв., рассматриваются сообщения армянской историографии данного периода, которые созвучны с мотивом похищения и усыновления подростка (подростков) в эпосе, т.е. “девширме” (набор детей или т.н. “кровная дань”), проводимые джелалийскими силами на занятых ими территориях. На основе анализа армянских источников можно сделать следующие выводы:

-персонаж усыновленного и мотив похищения занимают особенное место в западной группе эпоса, а иногда Айвазу приписывается армянское происхождение;

-тот же персонаж и мотив нашли свое отражение в версиях восточной группы эпоса;

-посредством персонажа усыновленного и мотива похищения в эпосе отражены исторические события конца XVIв. и начала XVIIв., т.е. джелалийские “девширме” и прочие насильственные действия в отношении христианского (в т.ч. армянского) населения региона.

## THE PERSONAGE OF THE ADOPTEE IN THE EPIC OF “KOROGLU” AND THE BASIS OF ITS HISTORISM

(summary)

*Ramazyan Samvel*

The presence of the episode of kidnapping and adoption of the handsome teenager Ayvaz (Eyvaz, Avaz, Ovez, Ivaz) in all national versions is characteristic of the epic "Koroglu". Details, realities and geography vary depending on the places and environment of the epic.

Since bases of the historism of the epic generally concern the Jelali Revolts (Celali Rebellions) in the Ottoman Empire at the end of the 16<sup>th</sup> century and the beginning of the 17<sup>th</sup> century, the reports of the Armenian historiography of this period are considered, which are consonant with the motive of kidnapping and adoption of adolescent (adolescents) in the epic, i.e. "devshirme" (a set of children or so-called "blood tax"), conducted by the forces of Jelali in their occupied territories. Based on the analysis of Armenian sources, it is possible to make the following conclusions:

-The personage of the adoptee and the motive of kidnapping occupy a special place in the western group of the epic, and sometimes the Armenian origin is attributed to Ayvaz;

-The same personage and motive were reflected in the versions of the eastern group of the epic;

-Through the personage of the adoptee and the motivation for abduction in the epic, the historical events of the late 16<sup>th</sup> century and the beginning of the 17<sup>th</sup> century are reflected, i.e. Jelali "devshirmes" and other violent actions against the Christian (including Armenian) population of the region.